

ՆԿԻՐՎՈՒՄ Է ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱԾԻ 100-ՎՄՅԱԿԻՆ

«Լավագույն ուսանող» մրցույթի հաղթողներ



Լիլյա Առաքելյան,
ԿԳՄՍ նախարար՝
Վահրամ Դումանյան,
Վարդան Գյոդակյան,
ԵՊԿ ղեկավար
Սոնա Դովհաննիսյան



«ԵՐԱԺԻՇՏ» ամսաթերթի 15-ամյակը, «ԵՊԿ հրատարակչության» շնորհանդեսը ԵՊԿ-ում, «Երաժշտական Հայաստան» ամսագրի սեղծման 25-ամյակը



Իզաբելլա Մարության, Արմինե Աթոյան, Արմինե Պողոսյան (Կ. Սարաջյանի անվան ՄԵԴԻ տնօրեն, դաշնակահար), Գոհար Շադոյան, Ծովհնար Մովսիսյան («ԵՊԿ հրատարակչությունը» գործում է ԵՊԿ պրոդյուսերի ենթակայությամբ), Անուշ Կիրակոսյան, Նարինե Զարիֆյան (ԵՊԿ ջազ-փոփ ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, կոմպոզիտոր), Սոֆա Ազնաուրյան

«ԵՊԿ հրատարակչության» շնորհանդեսը ԵՊԿ-100-ամյակին, ԵՊԿ 4-րդ հարկի դահլիճ 8.2.2021 թ.

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի 100-ամյակին նվիրված, փետրվարի 8-ին, 2021 թ., ԵՊԿ 4-րդ հարկի դահլիճում տեղի ունեցավ «ԵՊԿ հրատարակչության» շնորհանդեսը մի քանի հորեյանական տարեդարձերի բոլորումով: Այն է. առաջին հերթին «ԵՐԱԺԻՇՏ» ամսաթերթը երկու ամիս առաջ թևակոխեց 15-ամյակը, որը նշանակալի հորեյանական է:



БРАВО, МАСТЕРА!



Фредди Кемпф –
фортепиано
(Германия),
Клара-Джуми Кан –
скрипка
(Южная Корея),
Александр Чаушян –
виолончель (Англия)

В морозный вечер 21 февраля 2021 года, в предвкушении красивого музыкального события, в Концертном зале им.А.Хачатуряна собралась истосковавшаяся по концертам публика, в основном музыканты. В интерпретации известных исполнителей должны были прозвучать два Фортепианных трио – Бетховена “Archduk” (B-dur), посвященное эрцгерцогу Рудольфу, покровителю и ученику композитора, – и Чайковского Piano trio (a-moll) “Памяти великого артиста“, посвященное другу и первому исполнителю произведений Чайковского – Николаю Рубинштейну. Напомним, что в Ереване это Трио Бетховена впервые было исполнено 4 марта 1925 года в зале Ереванской консерватории преподавателями Анной Мнацаканян (фортепиано), Оганесом Оганезовым (скрипка) и Артемием Айвазяном (виолончель), а Трио Чайковского прозвучало 23 мая 1924 года в том же зале в составе: Евгения Хосровяна (фортепиано), Авет Габриелян (скрипка) и Артемий Айвазян (виолончель).



Նվիրվում է ԶՊՄՆ հիմնադրման 15-ամյակին

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՍԻՄՖՈՆԻԿ ՆԿԱԳԱՆՈՒՄԻ» գործունեությունը համավարակի եւ պատերազմի պայմաններում՝ Հարցազրույց ԶՊՄՆ տնօրեն Սարգիս Բալթաթյանի հետ



Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, ղեկավար Սերգեյ Սմբատյան

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը տոնում է իր 15-ամյակը: Համավարակի, իսկ հետո նաև պատերազմի պայմաններում նրա գործունեության մասին զրուցեցինք նվագախմբի տնօրեն՝ Սարգիս Բալթաթյանի հետ:

Խնդրում ենք, ներկայացրեք Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի գործունեությունը, առիթասարակ:

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը 2021 թվականի հունվարի 25-ին դարձավ 15 տարեկան: Դիրիժոր Սերգեյ Սմբատյանի հիմնադրած նվագախումբը, շատ կարճ ժամանակում կարողացավ իր առանձնահատուկ տեղը գրավել հայ կատարողական արվեստում և հայտ ներկայացնել միջազգային երաժշտական ասպարեզում՝ աշխարհի բազմաթիվ կայացած ու ավանդույթներ ունեցող նվագախմբերի կողքին հանդես գալով իր ինքնատիպ հնչողությամբ, հետաքրքիր երաժշտականությամբ ու հարուստ երկացանկով:

Համավարակի պայմաններում մշակութային օջախները հիմնականում տեղափոխվեցին առցանց հարթակ: Ինչպե՞ս է աշխատել Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը, ի՞նչ ծրագրեր իրականացվեցին:

Համավարակի պայմաններում Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը իր աշխատանքն ամբողջովին տեղափոխեց առցանց տիրույթ և իրականացրեց մի շարք հետաքրքիր նախագծեր:



ԿՈՌՅԱՆՆԵՐԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳԵՐԴԱՍՏԱՆԸ



Զախից աջ՝ Նունե Սոֆյան՝ պկու (ման դաշնակահար),
Էլմիրա Կոռյան՝ քանոն (ման դաշնակահար), Էվելինա Կոռյան՝ քամանչա
(ման ջութակահար), Վլադիմիր Կոռյան՝ դուդուկ՝ (ման կլառնետահար),
Զորիկ Կոռյան՝ ակորդեոնահար

քիր բացահայտումներ են լինում նրանց հետ հարցազրույցների ընթացքում: «Երաժիշտ» ամսաթերթը երկի թե եզակի այն հարթակն է, որտեղ նրանք անթաքույց հպարտությամբ պատմում են, թե որտեղից են ծնողները, ինչ տոհմի շառավիղ են: Այնքանով, որքանով նրանցից յուրաքանչյուրը տեղեկացված է, արդեն թույլ է տալիս մեզ կարծիք կազմելու նրանց ծագման մասին:



« Ե ա ն ա -
չենք միմ-
յանց» հողվա-
ծաշարի նպա-
տակն է ներ-
կ ա յ ա ց ն է
լ երաժշտու-
թյան ասպա-
րեզում ստեղ-
ծ ա գ ո Ր ծ Ո Ղ ,
կատարող հայ
ա Ր Վ Ե Ս Տ ա -
գետներին և՛
իրենց գործու-
նեության շը-
ջանակներում,
և՛ նաև նրանց
գ Ե ն Ե տ ի կ
կապն իրենց
ն ա խ ն յ ա ց
հետ: Հավա-
տացեք, ան-
չափ հետաքը-

«ԵՐԱԺԻՇS» ամսաթերթի 15-ամյակը, «ԵՊԿ հրատարակչության» շնորհանդեսը ԵՊԿ-ում, «Երաժշտական Հայաստան» ամսագրի սեղծման 25-ամյակը

1 Շնորհանդեսը ողջունեց ԵՊԿ ղեկավար, պրոֆեսոր Սոնա Գովհաննիսյանը «Երաժիշտ»-ի 15-ամյակի առթիվ և նշեց ամսաթերթի կարևորությունը ու անհրաժեշտությունը կոմսերկատորիայի և նաև հանրապետության ու Սփյուռքի կյանքում:

Ողջունել խոսքեր ասվեց ԵՊԿ պրոռեկտոր Ծովինար Մովսիսյանի կողմից, որպես կարևորագույն գործունեության օղակ ուսանողության և պրոֆեսորադասախոսության համար:

Կարելի է ասել նշանակալի է՝ հայ մասնագիտական երաժշտական թերթային մամուլի համար: 15 տարի 182 համար երաժշտական թերթ հայ իրականության մեջ և 24 տարի երաժշտագիտական մասնագիտական միջազգային երաժշտական «Երաժշտական Հայաստան» ամսագրի համար այն դեպքում, երբ հայ իրականության մեջ առաջին անգամ ստեղծվեց այդքան երկարակյաց և զարգացող մասնագիտական մամուլ, որը հանդիսանում է պետական կոմսերկատորիայի պաշտոնական մամուլը: Այդ մասին ժամանակին Տիրան Լօքսմոյսյանը գրեց, երբ 2000 թվականին դեռ Կ.Պոլսում էր ապրում և աշխատում «Ակոս» շաբաթաթերթում, Հրանտ Դինքի ընկերակցությամբ: Մանրամասն թվարկեց թե՛ Հայոց աշխարհում, թե՛ Սփյուռքում և թե՛ Հայրենիքում քանի-քանի արվեստի և թատրոնի-երաժշտության թերթեր են հրատարակվել ու այլ թերթեր ու ամսագրեր են ստեղծվել, սակայն այս երկարակյացությունը չեն ունեցել: Եվ մեր հյուրն էր նաև այսօր, որովհետև նա նախևառաջ պրոֆեսիոնալ երգիչ է, ավարտել է ակադեմիական երգեցողության Գոհար Գասպարյանի դասարանը, այսօր հանրապետությունում ճանաչված դասախոս և թրջագետ է, բուհական դասագրքի հեղինակ, նաև կոմիտասագետ, մեր ամսագրի և ամսաթերթի հեղինակը:

Արմինե Աթոյանն ամսաթերթի գլխավոր խմբագիրը, ներկայացրեց «Երաժիշտ» ամսաթերթի 15-ամյա ընթացքի ձեռքբերումները և կարևորությունը ոչ միայն երաժշտական աշխարհում, այլև ընթերցասեր հանրության համար: Նա նաև նշեց այս տարիների բոլոր գլխավոր խմբագիրներին՝ Աննա Գևորգյան (առաջին գլխավոր խմբագիրը), Տաթև Ամիրյան, Հասմիկ Համբարյան, Շուշան Այվազյան, և անդրադար-



Հարություն Մկրտչյանի փոխադրումներից որոշ նյութեր ներկայացրեց նրա անվանակից թոռը՝ Հարություն Մկրտչյանը



Մարինա Օթարյանի կողմից «Երաժիշտ» ամսաթերթին շնորհավորանքները՝ նրա նախկին գլխավոր խմբագրի՝ Հասմիկ Համբարյանի միջոցով

Հյուրերից էր Սուսաննա Մուշեղյանը՝ Տ. Չուխաջյանի ՄԵԴ-ի ուսուցչուհի: Հեղինակ և հյուր էր Զ. Քուշնարյանի անվ. ՄԱԴ-ի տնօրեն Էդգար Գյանջումյանը, ով համագործակցել է «Երաժշտական Հայաստան» ամսագրում՝ հրատարակելով իր գիտական ուսումնասիրությունները:

Շնորհավորական ջերմ ուղերձով հանդես եկավ Ալեքսանդր Աճեմյանի ՄԵԴ-ի տնօրեն նաև հրատարակչության բարեկամ և հեղինակ, ջութակահար՝ Անուշ Խաչատրյանը:

«ԵՊԿ հրատարակչությունում» իրականացրած նախագծերի հեղինակ էր և երգիչ, Արցախյան պատերազմում զոհված Գեորգ Հաճեանը. նրա հիշատակին նվիրված

ծուն, որոնցից մեկը՝ Գոսերի կատարողականության վերաբերյալ ձեռնարկ է:

Հարություն Մկրտչյանի փոխադրումների շնորհանդեսը կատարումով ներկայացրեց նրա անվանակիցը՝ թոռը:

Ա. Սպենդիարյանի թանգարանի տնօրեն՝ Մարինե Օթարյանի կողմից «Երաժիշտ» ամսաթերթի շնորհավորանքները փոխանցվեցին նրա նախկին գլխավոր խմբագրի՝ Հասմիկ Համբարյանի միջոցով, ով այժմ աշխատում է թանգարանում:

Կ. Սարաջյանի անվան ՄԵԴ-ի տնօրեն դաշնակահարուհի Արմինե Պողոսյանը հանձնեց Պատվոգրի հրատարակ-



Գեորգյանի ջազային ստեղագործություններից կատարում՝ Գայանե Սահակյան և կոմպոզիտոր՝ Լիանա Խաչատրյան, Գայանե Սաթևոյանի նոտային ժողովածուի շնորհանդեսին



Հասմիկ Համբարյան, Հարություն Մկրտչյան, Սուսաննա Մուշեղյան, Իզաբելլա Մարության, Արմինե Աթոյան, Արմինե Պողոսյան, Գոհար Շազոյան, Անուշ Կիրակոսյան, Նարինե Զարիֆյան, Կարինե Մկրտչյան, Քրիստինե Սիմոնյան, Ֆրիդա Ներսիսյան Հաջյան ԵՊԿ IV հարկի դահլիճ, 2021 թ., 8-ը փետրվարի



Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի մենեջերուհի՝ Դիանա Հարությունյան, հեղինակ և ԵՊԿ պրոֆեսոր, կոմպոզիտորներ՝ Մարգարիտ Սարգսյան

ծավ նրանց կատարած աշխատանքների:

«ԵՊԿ հրատարակչություն»-ում աշխատում է խմբագիր, «Երաժշտական Հայաստան» ամսագրի պատասխանատու քարտուղար Անուշ Կիրակոսյանը, ով տաղանդավոր քանոնահարուհի է և ԵՊԿ դասախոս լինելուց բացի պրոֆեսիոնալ ժուռնալիստ է: Վերջին շրջանում հրատարակչության գործընկերն է և հետաքրքիր նոտեցումներով հոդվածաշարերի հեղինակ:

Համերգային ծրագրի մասնակից դաշնակահարուհի Սերգեյ Սարաջյանի («ԵՊԿ հրատարակչության» հրատարակչական խորհրդի նախագահ) դասարանի ասիստենտ Իզաբելլա Մարությանի կատարումը երաժշտական ողջուն էր:

Կատարումներ եղան: Շնորհանդեսին ներկա էին նրա կինը՝ բանասեր Ֆրիդա Հաճեանը և որդին՝ կիթառահար, ԵՊԿ շրջանավարտ՝ Թաթուլ Հաճեանը:

Ներկայացվեցին «ԵՊԿ հրատարակչության» ուսումնական ընթացքի համար կարևորագույն հրատարակչություններ՝ նոտային գրականություն, փոխադրումներ և կազմած ժողովածուներ, հեղինակ՝ արդեն պրոֆեսոր Հարություն Մկրտչյանի փոխադրումները հարվածային, սիմֆոնիկ նվագախմբի գործիքների տարբեր կազմերի համար 3 ժողովա-




«ԵՊԿ հրատարակչության» խմբագիր, «Երաժշտական Հայաստան» ամսագրի պատասխանատու քարտուղար Անուշ Կիրակոսյան, հյուր՝ Սուսաննա Մուշեղյան Տ. Չուխաջյանի ՄԵԴ-ի ուսուցչուհի, համերգային ծրագրի մասնակից դաշնակահարուհի՝ Սերգեյ Սարաջյանի դասարանի ասիստենտ Իզաբելլա Մարության, Գ. Կ. Շազոյան, հեղինակ և հյուր Զ.Քուշնարյանի անվ. ՄԱԴ-ի տնօրեն Էդգար Գյանջումյան, «ԵՊԿ հրատարակչությունում» իրականացրած նախագծերի հեղինակ և երգիչ Արցախյան պատերազմում զոհված Գեորգ Հաճեանի հիշատակին նվիրված կատարումներին ներկա նրա այրին՝ բանասեր Ֆրիդա Հաճեան և որդին՝ կիթառահար, ԵՊԿ շրջանավարտ Թաթուլ Հաճեան

չության հիմնադրին. «ԵՊԿ 100-ամյա շրջանակներում տոնվում է նաև հանրապետությունում միակ պետական երաժշտական «ԵՊԿ հրատարակչության» հիմնադրման 17- (2004 թ.) «Երաժիշտ» ամսաթերթի 15- և «Երաժշտական Հայաստան» միջազգային գիտական մասնագիտական ամսագրի ստեղծման 25-ամյակները (Գ.Շազոյանը

«Երաժիշտ» ամսաթերթի 15-ամյակը



Գ. Շագոյանը ներկայացնում է Մ. Սարգսյանի «Ն. Գալանդերյանի ռոմանսները և երգերը» ժողովածուն



ԵՊԿ ռեկտոր, պրոֆեսոր Սոնա Չոփանյանի շնորհավորանքը «Երաժիշտ» ամսաթերթի 15-ամյակի առթիվ



ԵՊԿ պրոռեկտոր Շովինար Սովսիսյանի շնորհավորանքը



Տիրան Լոքմազյոյան թրքագետ, երգիչ, կոմիտասագետ, ամսագրի և ամսաթերթի հեղինակ-հյուր




Էդիկ Ղաբուլյան ԵԳԱ պրոֆեսոր, «Երաժիշտ» ամսաթերթի անվան տառատեսակի հեղինակ

2 սական ամսագրի, 2017 թ., հիմնադիր-պատասխանատու քարտուղարն է):

Այս առթիվ՝ որպես երաժշտական մասնագիտական մամուլի հիմնադիր, Կ. Սարգսյան անվան երաժշտական դպրոցի կողմից Գոհար Շագոյանը պարգևատրվում է պատվոգրով:

4. Սարգսյան անվան երաժշտական դպրոցի տնօրեն՝ Արմինե Պողոսյան»


Ներկայացվեց Մարգարիտ Սարգսյանի հեղինակած «Նիկոլ Գալանդերյանի ռոմանսներ և երգեր» ժողովածուն, և այդ ժողովածուից երգեր կատարվեցին: Ի դեպ, նշենք, որ վերոնշյալ հրատարակության մեջ ընդգրկված երգերի նվա-



Էդիկ Ղաբուլյանը՝ Երևանի Գեղարվեստի Ակադեմիայի պրոֆեսոր, ներկա էր «ԵՊԿ հրատարակչության» շնորհանդեսին: Նա «Երաժիշտ» ամսաթերթի անվանատառատեսակը ամհատույց նվիրաբերել էր ռեկտոր Սոնա Չոփանյանին, որի մտահղացմամբ

փոխվեց ամսաթերթի անվանման տառատեսակը և ի պատիվ նրան պարոն Ղաբուլյանն իր տառատեսակներից համապատասխանաբարները նվիրաբերեց կոնսերվատորիայի գիտական պետական «ԵՊԿ հրատարակչությանը» հատկապես՝ «Երաժշտական Չայաստան» ամսագրի և «Երաժիշտ» ամսաթերթի տառատեսակների կիրառման համար: Եվ շնորհանդեսին նվիրեց հրատարակիչին՝ երաժշտագետ, հիմնադիր-գլխավոր խմբագիր Գոհար Շագոյանին «Քառածայն Պատարագ» պատկերազարդ ակրոն, որտեղ չորս հեղինակներ համախմբվել են և հրատարակել ժողովածուն: Չորս արվեստագետների ստեղծագործություններ են ներկայացված՝ գեղանկարիչ՝ Վիլիկ Գաբազյանի, պոետ՝ Սամվել Զուլյանի բանաստեղծությունները, գրող՝ Արշալույս Փայտյանի արձակ պատմվածքները և տառարվեստագետ՝ Էդիկ Ղաբուլյանի տառատեսակների ամբողջ գունապնակը:

գաբաժինները նույնպես հեղինակել է Մարգարիտ Սարգսյանը: Այն համերգների հետ միասին քանիցս ներկայացվել է Չայրենիքում և Սփյուռքում: Կատարումներով ելույթ ունեցան Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգա-




յին ակադեմիական թատրոնի մենեջգուիի՝ Դիանա Զարուբյունյանը, հեղինակը՝ ԵՊԿ պրոֆեսոր և կոնցերտմայստեր՝ Մարգարիտ Սարգսյանը:

Իրականացվեց նաև դոցենտ Գայանե Մաթևոսյանի ակադեմիական երգեցողության բաժնում սովորողների համար նախատեսված ուսումնամեթոդական նոտային ժողովածուի շնորհանդեսը՝ ջազային-դասական արևմտաեվրոպական և ամերիկյան կոմպոզիտորների երգերից կազմված:

Ելույթ ունեցան պրոֆեսոր Կարինե Մկրտչյանի դասարանի ուսանողներն ի հեշտակ զոհված ուսանող՝ խոստումնալի, տաղանդավոր Գոռ Թումանյանին: Ցուցադրվեց նաև Գոռ Թումանյանի կատարումը տեսածայնագրությամբ, որով նրա ներկայությունը փաստեցինք, որովհետև նա դեռ դպրոցական շրջանից եռանդուն մասնակցում էր «ԵՊԿ հրատարակչության» շնորհանդեսներին հրատարակչի հրավերներով: Շնորհանդեսից առաջ, անցյալ տարվա դեկտեմբերին, Կարինե Մկրտչյանի դասարանը հուշ համերգ էր կազմակերպել, և հրավիրել՝ այն վարելու, ներկայացնելու Գոռ Թումանյանին, հանդես գալ երաժշտագիտական ներածական խոսքով, Գոհար Շագոյանին:

Կոնցերտմայստերներն էին՝ Քրիստինե Սիմոնյանը և Արամ Խաչատրյանի անվ. դաշնակահարների միջազային մրցույթի դափնեկիր՝ Ժաննա Կիրազյանը:



Շնորհանդեսին ներկա էին Գոռ Թումանյանի ծնողները՝ նաև զոհված զինվոր Վարդան Ամալյանի մայրը:

Շատ հուզիչ էր ստանալ շնորհավորանքներ Արցախի երաժշտական ուսումնարանից, որի (ինչպես նաև կոնսերվատորիայի) հիմնադիրը եղել է Ռոմանոս Մելիքյանը: Նաև անհատական շնորհավորանք երաժշտագետ Նինա Զակոբյանից: Բերում ենք նրանց շնորհավորանքները բառացիորեն:

Հրատարակվել են և ներկայացվեցին նաև գերմանաբնակ դաշնակահարուհի և կոմպոզիտոր, Գերմանիայի Ունո քաղաքում Կոմիտասի անվ. երաժշտական դպրոցի տնօրեն Արմինե Ղուլյանի ստեղծագործությունների (Համո Սահյանի բանաստեղծություններով) նոտային ժողովածուն, նաև հեղինակ խմբավար Արաքսյա Խաչատրյանի «Խմբերգային պարտուրի ընթերցում» ուսումնամեթոդական ձեռնարկը երաժշտական բուհերում սովորողների համար:

2021 թվականը հորեյանական լինելով կոնսերվատորիայի համար, այդ առիթով նաև «Երաժշտական Հայաստան» ամսագրի ապագա երկու համարներն էլ նվիրվելու են նրա 100-ամյա հորեյանին: Ի դեպ, այն հորեյանական է նաև ամսագրի համար, որի ստեղծման 25-ամյակն է:



Վարդուհի Ենոքյան, կոնցերտմայստեր՝ Քրիստինե Սիմոնյան



Արտյոն Ամանգուլյան, կոնցերտմայստեր՝ Ժաննա Կիրազյան

Нина Акопян 5 февр.

Уважаемый коллектив Ереванской Государственной консерватории им. Комитаса! Уважаемая редакция газеты «Еражишт»! Дорогая Гоар Карленовна! Поздравляю Вас с 15-летним юбилеем газеты «Еражишт»! С 2005-го года Вы на высоком профессиональном уровне освещаете музыкальную жизнь Армении, Арцаха, Диаспоры. Неоценим Ваш труд в этом благородном деле. Желаю Вам процветания, плодотворных встреч, интересных событий, дальнейших успехов в деле освещения культурной жизни настоящего и прошлого во имя будущего армянского народа.

С глубоким уважением Нина Акопян, музыковед, преподаватель Степанакертского музыкального колледжа им. Саят-Новы

ՏՊԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՍԿԱՆ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԻՑ

(Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի 100-ամյակի առթիվ)

Նոր սկսվող 2021 թվականը, մեր արվեստասեր հանրության համար առանձնանում է նախ և առաջ հոբելյանների առատությամբ: Այս տարի լրանում են Ալեքսանդր Սպենդիարյանի ծննդյան 150-ամյակը, Առնո Բաբաջանյանի, Վաղարշակ Կոտոյանի, Ադամ Խուրոյանի, Էդվարդ Միրզոյանի ծննդյան 100-ամյակը, Դ. Պարոնյանի անվ. երաժշտական կոմեդիայի պետական թատրոնի հիմնադրման 80-ամյակը, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի կազմավորման 15-ամյակը... տողերիս հեղինակը, լինելով նախկին ԵՊՀ-ական, պարտք է համարում հիշատակել նաև Երևանի պետական համալսարանի մշակույթի կենտրոնի հիմնադրման 15-ամյակը: Կարճ ասած՝ 2021 թվականը նոր է սկսվում, և այս տարի մեր անելիքները զգացնել են տալիս իրենց ամբողջ ծավալով:

Այս տարվա՝ առանձնահատուկ ուշադրության արժանի հոբելյաններից է Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի հիմնադրման հարյուրամյակը: Անգնահատելի, ավելի ծիշտ՝ առաջնային է կոմսերվատորիայի դերը հայ ազգի երաժշտական դիմագծերի ձևավորման, շտկման և հանրահռչակման կարևորագույն, դժվարին և անչափ պատասխանատու գործում: Այս գիտակրթական հաստատության գործունեության առանձնահատկություններից կցանկանայի ընդգծել երաժշտական դաստիարակության ազգային ուղղվածությունը, որի համակողմանի ընկալմանը նպաստում է ծանոթությունը համաշխարհային դասական արվեստին, հանրության հետ մշակութային կապերի պահպանումը և զարգացումը համերգ-ուկնդրությունների (ներառյալ առաջնախաղերը), ծայնագիր և տպագիր հրապարակումների տեսքով, սերտ համագործակցությունն արվեստագետ անհատների և կազմակերպությունների հետ՝ և Հայաստանում, և՛ արտերկրում: Ինչը կցանկանայի համարել հատկապես ուրախալի՝ տարիների ընթացքում աշխարհով մեկ տեղի ունեցող տարատեսակ վայրիվերումները, տարբեր ոլորտներում տեղի ունեցող կտրուկ փոփոխությունները (որոնք միշտ չէ, որ կարող են «զարգացում» կոչվել) էական ազդեցություն չեն թողնում Կոնսերվատորիայի վրա, որը պրոֆեսորադասախոսական և ուսանողական կազմի բնական սերնդափոխության հետ մեկտեղ, հաջողությամբ պահպանում է իր կուլեկտիվ դիմագծերի յուրահատկությունը, իր ավանդույթները, իր հասարակական դիրքն ու մշակութային քաղաքականությունը: Էլ չեն թվարկում հայ աշխարհահռչակ կոմպոզիտորների անունները, ովքեր երաժշտության լայնածիր աշխարհի մուտք գործեցին, իրենց ուրույն ստեղծագործական ձեռագրերը ձևավորեցին ու հստակեցրին հենց Երևանի կոնսերվատորիայում և ժամանակին իրենց երաժշտությամբ ճանաչելի դարձան աշխարհին՝ միաժամանակ ծանաչելի դարձնելով Հայաստան աշխարհն իր հոգևոր անբավ հարստությամբ:

Ի դեպ՝ ստեղծագործելու մասին: Ինչքան՝ զեղեցիկ, ինչքան՝ զերոյն և միաժամանակ ինչքան՝ պարտավորեցնող է հնչում՝ ստեղծագործել, արարել: Դժվար թե գտնվի աշխարհիս երեսին մի մարդ, որ երբևէ՝ զեթ մեկ անգամ արած չլինի որևէ զեղարվեստական ստեղծագործական փորձ: Ուն համար դա պարզապես հոբբի է՝ ազատ ժամանակի զբաղմունք, ուն համար՝ կողմնակի մասնագիտություն, և քանի՞սն են իրենց կյանքը նվիրում հենց ստեղծագործելուն:

Որքան տարբեր են մարդիկ՝ իրենց աշխարհայացքով և նախասիրություններով, և հետևաբար այնքան տարբեր են մեկ հոգու արարումները մյուսից: Եվ քանի որ մեր օրերի հասարակարգն ընծեռում է յուրաքանչյուր անձի ինքնադրսևորման ազատություն, էլ չենք խոսում տեղեկատվության ասպարեզում չտեսնված ազատությունների մասին, հաճախ ակամատես ենք լինում բազմաթիվ ու բազմազան ստեղծագործողների՝ տարբեր աստիճանի պատրաստվածությամբ, ոգևորվածությամբ, նախասիրությունների և մասնագիտությունների տարբերությամբ, շատ հաճախ՝ նաև ինքնուսենրի:

Այս ամենով հանդերձ, ինչքան են փոխվել պահանջները գեղարվեստական ստեղծագործության և ստեղծագործողների հանդեպ: Եթե XVIII դարում բավական էր ընդամենը երաժշտական կանոններին համապատասխանող զեղեցիկ ստեղծագործություն գրելը, մեր օրերում, եթե ուզում ես լինել պրոֆեսիոնալ ստեղծագործող, առաջնային հրամայականն է՝ գտնել ու չկորցնել քո ուրույն ոճը, ինքնատիպությունը: Առաջին հայացքից հեշտ կարելի է առարկել՝ եթե ստեղծել են այսինչ-այնինչը՝ առանց ուրիշների ստեղծագործությանը ծանոթ լինելու, ուրեմն ինքնատիպությունն երաշխավորված է: Սա միայն առաջին հայացքից: Արդյոք քիչ չեն այնպիսի ինքնուս ստեղծագործողները, ովքեր գրում են՝ անգիտակցաբար կամ ենթագիտակցաբար նմանվելով մի ուրիշ անձի: Քիչ տեղ չի զբաղեցնում այս հարցում ժանրի ու ոճի ընտրությունը. եթե երգեր են (խոսքս առավել «թեթև» ոճերի

մասին է), դեռ հասկանալի է. այստեղ կարևորվում են հեշտ ընկալվող «սիրուն» բառերը, հեշտ երգվող մեղեդիները, թեթևակի գործիքավորում, և վերջապես՝ առավել լայն հանրությանը հասցեագրված լինելը: Ինչը չենք կարող ասել ակադեմիական ժանրերի ստեղծագործության մասին: Բավականին տարբեր են ուկնդիրները, նրանց ճաշակն ու տեղեկացվածությունը, հետևաբար՝ նաև պահանջմունքներն ու գնահատման չափանիշները:

Արդեն մշեցիկը, որ այս ասպարեզում առաջնահերթություն է ինքնատիպությունը: Այդ պատճառով էլ համեմատաբար քչերն են ցուցաբերում համարձակություն և դիմում ակադեմիական ժանրերին՝ լինեն դրանք սոնատներ, սյուիտներ, կոնցերտներ, սիմֆոնիաներ և այլն: Կան նաև մարդիկ, ովքեր, բառացիորեն ընկալելով «նորարարություն» և «չկրկնվել» բառերը, «ստիպված» հեռանում են բուն արվեստի ակունքներից, մերժում են ավանդական՝ ակադեմիական դարձած միջոցներն ու հնարքները, ինչի արդյունքում նրանց ստեղծածը դժվար է միանշանակորեն որակել որպես երաժշտություն:

Եվ բոլոր այս ստեղծագործ մարդկանցից քանի՞սն են ընթերցում արվեստի ոլորտներում ինքնատիպությանը հասնելու դժվարությունը, որ մեր օրերում հասկանալի պատճառներով շատ ավելի է խորացել: Այս առթիվ հաճախ մտաբերում են մի հայրենակցի խոսքը. «Էն դստեղի Հովհաննես Թումանյանը ինչ կար-չկար՝ գրեց, բան չթողուց՝ ջահելնին գրեն»:

Երբ առիթ ու հնարավորություն ենք ունենում ծանոթանալ պրոֆեսիոնալ կրթության բովոլ անցած երիտասարդ (տողերիս հեղինակի հասակակից) կոմպոզիտորներին և նրանց հրապարակված ստեղծագործություններին, ամեն անգամ վերստին ստիպված ենք լինում վերոհիշյալ մտահոգությունը համարել առ առավել անհիմն: Քանի որ նրանք աչքի են ընկնում իրենց երաժշտական լեզվամտածողության թարմությամբ, կերպարների և դրանց վերարտադրման ուրույն ձևերով, տեղ-տեղ նաև դժվարընկալելիությամբ. իսկ այս խնդիրը կարելի է լուծել ուկնդրման ընթացքում տվյալ գործը մտքում վերլուծելով տարբեր տեսանկյուններից՝ թե՛ լադա-հարմոնիկ, թե՛ ռիթմիկ, թե՛ գործիքային կազմի և թե՛ կերպարների տեսանկյուններից. ինչ խոսք, ուն համար դա հաճելի և գրավիչ զբաղմունք է, ուն համար՝ մասնագիտություն: Քանի որ ինքս երաժշտապետ չեմ, կցանկանայի ընթերցողի հետ կիսվել զուտ ստացածն տպավորություններով՝ գլխավորապես կերպարների տեսանկյունից:

Ինձ հասակակից կոմպոզիտորներից շատերին առաջին անգամ հանդիպելու և ուկնդրելու հնարավորություն են ու-

ֆլեյտայի համար գրված «Bluebird's Song» (Կապույտ սիալիայի երգը) և կամերային անսամբլի համար գրված «Ատմոսֆերաներ» պիեսներում: Երկուսում էլ ոչ ավանդական կատարողական տեխնիկաների (շնչի կտրուկ ընդհատում, փողային գործիքի բանալիների հարված առանց շնչի, մուլ-տիֆոնիկա և այլն) առատ կիրառումը առաջին հայացքից կարող է թողնել մասնավորապես ազատ չափի և գործիքագիտությանը հայտնի ոչ դասական տեխնիկաների կիրառման ուսանողական էքսպերիմենտի տպավորություն, սակայն նույնիսկ անփորձ ականջի համար ակներև է դրանց հստակ նպատակաուղղվածությունը, այն է՝ բնականին առավելագույնս մոտեցող պատկերայնություն: Օրինակ՝ «Կապույտ սիալիայի երգում» երգից բացի լսվում է նաև վայրի անտառով անցնող քամու ձայնը, սիալիայի թռիչքը, ոստոսությունը, իսկ կուլմինացիան կարծես ներկայացնի փախուստ ինչ-որ գիշատչից: Իսկ «Ատմոսֆերաներ» այնպես են ընկալել, իբրև տվյալ կերպարը հայտնվել է երկրագնդից հարյուրավոր կիլոմետրեր վերև և օդում «կախված» մնալուց հետո աստիճանաբար վայրէջք է կատարում դեպի այն լարված ու անկանոն վայրիվերումներով լի աշխարհը, որից այսքան ժամանակ խուսափում էր: Իսկ այդ ժամանակ որոշակիորեն «ականջ սրելու» արդյունքում լսելի են դառնում օդի թրթռները, տարբեր առարկաների (օրինակ՝ երկնային քարեր) թռիչքի կամ անկման ձայները, կամ հենց աստիճանական անցումը մի ոլորտից մյուսը՝ որչափ որ ընկալելի է մարդու ականջին: Անկեղծ ասած՝ ծանոթ չեմ Ձեմնայի ավարտական աշխատանքին, բայց ինձ մնում է կարծել, թե այստեղ էլ ինչ-որ բնական կամ գերբնական կերպար է ընտրված, որը յուրատեսակ կերպով նկարագրված կարող է լինել սիմֆոնիկ նվագախմբի միջոցով: Մի խոսքով՝ համաբնական փիլիսոփայություն և մասնավորապես հեռավորարևելյան բնության գեղեցկության գերբնական նկարագրում գերերաժշտական լեզվով — ահա թե ինչու են տեսնում Ձեմնա Միմասյանի ստեղծագործական ձեռագրի յուրահատկությունը:

2015 թ. ՀԿՄ նախագահ, կոմպոզիտոր, պրոֆեսոր Արամ Սաթյանի հրավերով ներկա եղա «Միզոյանականների» մրցույթի գալա-համերգին, որը դաշնամուրային «Ծաղրածուների պարահանդեսով» (եթե հիշողությունս չի դավաճանում) բացեց այդ ամենամյա մրցույթի կրկնակի առաջին մրցանակակիր **Ալեքսանդր Հարությունյանը**, ուն շեփորի ազդականը՝ «Թավշյա հեղափոխություն» կոչված բեմադրության եզակի լուսավոր կետերից էր, և ուն փայլուն ստեղծագործական տաղանդով հիմնալու առիթ ունեցա, երբ ներկա էի «Վան» կամերային ստեղծագործության առաջնախաղը:

Ալեքսին են պարտական կոմպոզիտորական, դաշնակահարական և ընկերական վառ տաղանդով օժտված ևս մի հասակակցի՝ **Արամ Շեկիկյանի** հետ ծանոթությանս համար: Ուրախությամբ են հիշում այն տարիները, երբ նրա հետ համագործակցում էի որպես խմբագիր, և հիմա էլ, երբ նա ուսանում է Իտալիայում, խորին ուրախությամբ են հետևում նրա

ստեղծագործական և կատարողական հաջողություններին: Նրա վերջին դաշնամուրային շարքերը՝ «Պոսեյդոն» և «Հեկոս», ինչպես նաև Սոնա Միրիջանյանի հետ համահեղինակած մի շարք երգեր կառուցված են պոստմոդերնիզմի տրամաբանությամբ. ներդաշնակության ու թվացյալ հանգստի թողի ներքո պարզորոշ կերպով զգացվում է խորիրոգավորությունը և միաժամանակ հարազատությունը հայ երաժշտության լադահարմոնիկ յուրահատկությանը, ինչն էլ իր հստակ ու մնայուն տեղն ունի Շեկիկյանի՝ ինձ ծանոթ բոլոր ստեղծագործություններում: «Միզոյանականների» մրցույթի 2015 թ. գալա-համերգին Արամը ներկայացրեց դաշնամուրային «Պրեյլուդը», որի ստեղծած տպավորությունն ինձ մոտ չի մարել մինչ օրս: Այդտեղ հատկապես գրավիչ են համարում այն հակադրությունը, որ ստեղծվել է քառորդ հստակ ռիթմի ու այն կարծես ընդգծել փորձող ֆորշլագների, կոմիտասյան մտածողությանը համապատասխանող մեղեդիների ու դաշնամուրային ֆակտուրայի ցայտուն հարմոնիկ հզորության միջև:


Արամն ի բեն վիրտուոզ դաշնակահար է (հատկապես լսել է պետք Լիստի և Սկրյաբինի երկերը նրա կատարմամբ) և, որպես կոմպոզիտոր, փայլուն տիրապետում է դաշնամուրի համար ստեղծագործելու պահանջմունքներին ու հնարքներին: Երբեմն նրա նվագից ստացվող տպավորությունն այնպիսին է, որ իր երիտասարդական ոգին ու հարուստ ենթագիտական ռոյալիս փոխանցելիս վերջինս կարող է տեխնիկապես չդիմանալ, սակայն հեղինակը հեռու է իրեն սպառնելուց: Այդպիսի տպավորություն են ստացել մասնավորապես նրա *h-moll* «Վարիացիաներից»՝ հեղինակի կատարմամբ: Մի շարք վարիացիաներ՝ գրված լիստյան ոգով, նպատակ ունեն ցուցադրել ռոյալի ամբողջ հնչողական հզորությունը, և կատարողից



Ձեմնա Միմասյան




Ալեքսանդր Հարությունյան




Արամ Շեկիկյան



Սևան Ղարիբյան



Գոռ Իսախիրյան



Անդրեյ Կուրբետ



Վահագն Վարդանյան

նեցել Հայաստանի կոմպոզիտորների միությունում՝ մասնավորապես Է. Միրզոյանի անվ. պատանի կոմպոզիտորների մրցույթ-փառատոնի ժամանակ, ոմանց՝ հենց Կոնսերվատորիայում, իսկ ոմանց՝ նույնիսկ ԵՊՀ-ում, որտեղ, ի դեպ, մերթ ընդ մերթ անցկացվում են տարատեսակ երաժշտական միջոցառումներ՝ ներառյալ ստեղծագործական մրցույթներ ու փառատոներ:

Հենց ԵՊՀ-ում առիթ ունեցա ծանոթանալու կոմպոզիտոր և թավջութակահարուհի **Ձեմնա Միմասյանի** հետ, ով իր բնավորությամբ սկզբից ևեթ ինձ վրա թողեց գերմանացու տպավորություն. այդ առումով կցանկանայի առանձնացնել նրա լրջախոհությունն ու խստապահանջությունը, իսկ նվիրվածության արտահայտում կարելի է ակնկալել միայն այն ժամանակ, երբ Ձեմնան մինչև վերջ և հաստատապես համոզված է լինում դիմացինի անկեղծության մեջ, նույնիսկ եթե խոսքը նրա ստեղծագործությանը ծանոթանալու մասին է: Միգուցե այս պատճառով է նա հազվադեպ հրապարակ հանում իր ստեղծագործությունները: Մինչև Կոնսերվատորիայի ստեղծագործական դասարան ընդունվելը գրված պիեսներից առայժմ հրապարակված է միայն «Պոնեմը» ալտի և դաշնամուրի համար. այստեղ աչքի է զարնում փիլիսոփայական խորության ձգտող պատանեկան որոնումների անհամադիստ բնույթը, զգացմունքների չափավոր թվացող անկեղծությունը, ինչին հատկապես նպաստում է ալտի տեմբրն՝ իր առավել սառը, խիտ և փայլազուրկ որակով, իսկ վերին ռեգիստրում հնչող «ճիչը», ըստ իս, հեռու է աղաչական լինելուց, այլ կարծես հեղինակին ծայրահեղ տանջող հռետորական ու բազմանշանակ հարց լինի՝ ինչու:

Համաբնական փիլիսոփայությունը, որպես առանցքալետ, իր փայլուն դրսևորումն է գտել Ձեմնայի ուսանողական ստեղծագործությունների մեջ՝ մասնավորապես մենամկազ

Ծովինար Չալոյանի դասախոսությունները

«Պատմական Հայաստանի գեղագիտության պատմությունը»

«Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը
թարգմանությունների բազուկին է»:

ԼԱ ԿՐՈՋԻ

Ֆրանսիացի աստվածաբան, XVII դ.

Սկզբը նախորդ համարում

Հայաստանում «Աստվածաշունչը» V դարում թարգմանվել է սկզբում ասորերենից, հետագայում լրացվել և սրբագրվել է հունարենից: Այս սուրբ գիրքը գրաբարով կոչվեց «Աստվածաշունչ» քանի որ իր ստեղծման առաջին իսկ պահից ընկալվեց որպես Աստծու կենդանի շնչով շարադրված գիրք, որն արտագրելով՝ փոխանցում էին սերնդեսերունդ որպես փրկարար արժեք: Այս գիրքն իր հաստատուն տեղը գտավ մարդկության հիշողության մեջ՝ ճանապարհ բացելով պատմաբանի, թարգմանչի, գրչի, մագաղաթ պատրաստողի, նկարչի, մանրանկարչի, ուսուցիչ-աշակերտ կապի համար: Մաշտոցի սիրելի աշակերտ Կորյունը գրում է. «Ոգևորությունը դարձել էր համատարած, մայրենի լեզվով գրել, կարդալ ցանկանում էին բոլորը՝ թագավորներից մինչև գյուղացիները»:

Հայտնի է, որ «Աստվածաշնչի» հայերեն թարգմանությունը մեծ արժեք ունի: Ֆրանսիացի աստվածաբան Լա Կրոզի (XVII դ.) արտահայտությամբ՝ այն «թարգմանությունների թագուհին է»: Արժեքավոր է այն փաստը, որ «Աստվածաշնչի» հայերեն թարգմանությունը գերծ մնաց կաթոլիկ կրոնի տեսաբան, «եկեղեցիների հայր» Ավգուստինոս Երանելիի (354-430 թթ.) ուսմունքի ճնշող ազդեցությունից: Նշենք, որ և՛ Սահակ Պարթևը, և՛ Մեսրոպ Մաշտոցն ստացել էին հելլենիստական կրթություն, որի հիմքը դատողությունն էր: Պատահական չէր, որ մաշտոցյան «Աստվածաշնչի» թարգմանությունն սկսվում է Սողոմոնի բառերով՝ «Ճանաչել զիմաստութիւն եւ գիտատ, իմանալ զբանս հանճարոյ», այսինքն՝ «Աստվածաշունչ» կարդացողից սպասում էին ոչ միայն հավատ, այլև մտքի զարգացում, կարողություն՝ հասկանալու իմաստություն, այլաբանություն:

Ինքը «Մաշտոց» երևույթը, նշանակում է, որ Աստված հայ ժողովրդին նվեր է մատուցում ոչ թե եկեղեցու, այլ հանճարեղ մարդու միջոցով: Կաթողիկոս Սահակ Պարթևը մաշտոցյան հայ տառերի գյուղը համեմատում էր հրեաների համար Հիմ Կաակարանի «Մովսես» երևույթի հետ:

Վաղ քրիստոնեությունն ուներ ավանդորդեն կիրառվող լեզուներով աղոթելու իրավունք արամեերեն կամ հին հրեերեն, ասորերեն, հունարեն, լատիներեն: Այդ տեսանկյունից մորարարություն էր «Աստվածաշնչի» հայերեն թարգմանությունը

ասորերենից և հունարենից, որտեղ կա ավելի քան 31 000 բառակապակցություն հմտորեն կապելով «բառից բառ», «մտքից միտք» դրույթը: Սուրբ գրքի գրաբարյան թարգմանությունը մեծ թռիչք էր հայկական ձևավորման համար: Տառերն ստեղծելուց մեկ դար հետո միայն, հաղթահարելով մեծ դժվարություններ, թարգմանվեց հայերեն: Դա քրիստոնեության քաղաքականության արդյունքն էր: Եվրոպայում, XVI դարում, գերմանացի մեծ լուսավորիչ, հոգևորական Մարտին Լյութերը հանդգնեց թարգմանել «Աստվածաշունչը» լատիներենից գերմաներեն՝ Հռոմի պապին չենթարկվելու նպատակով:

Հայկական եկեղեցին օժանդակում էր թարգմանությունների գործընթացին: Թարգմանվող հիմնական լեզուներն էին հունարենը և ասորերենը: Կաթողիկոս Սահակ Պարթևը և Մաշտոցը թարգմանությունների շարքը բազմազան և մատչելի դարձնելու համար կրթված երիտասարդներին՝ Կորյունին, Եղիշեին, Մովսես Խորենացուն, Դավիթ Անհաղթին և մյուսներին ուղարկում էին Եդեսիա, Ալեքսանդրիա, Աթենք: Թարգմանված «սուրբ էջերը» նրանք ուղարկում էին հայրենիք՝ եկեղեցուց իրավունք ստանալով շարունակելու ազգօգուտ գործը: Հայ թարգմանիչները ոչ միայն թարգմանում էին, այլև մեկնաբանում. արդյունքում հայ ժողովուրդն ստանում էր բազմաձև և բազմաբովանդակ մշակույթ: Մովսես Խորենացին գրում է. «Իմաստուն բառը սովորեցինք, այսպես կոչված, հեթանոսներից՝ իմաստուններից իմաստուն Արիստոտելից և աստվածային Պլատոնից: Հունաստանը մեր մայրն է, մեր գիտակցությունը և միտքը կերակրողը» (Մովսես Խորենացի Հայոց պատմություն, գիրք I, գլուխ II):

Վաղ Միջնադարի ուսյալները թարգմանում և մեկնաբանում էին Փիլոն Ալեքսանդրացուն, Հովհաննես Ոսկեբերանին, Արիստոտելին: Փիլոն Եբրայեցու տասնչորս աշխատություններից պահպանվել են միայն յոթը, այն էլ հայերեն: Ստիկլ Ջենոնի «Յաղագս բնության» աշխատությունը պահպանվել է միայն մեկ օրինակով՝ Երևանի Մատենադարանում: Հովհաննես Ոսկեբերան Եսայու գրքի հիսունվեց գլուխներից ութը հունարեն են, մյուսները պահպանվել են միայն հայերեն: Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնը» պահպանվել է հայերեն մեկ օրինակով՝ Մատենադարանում: XVIII դարում Վենետիկի Մխիթարյաններն այն հայերենից թարգմանեցին լատիներեն: Դավիթ Անհաղթը թարգմանել է Արիստոտելի «Ստորոգությունները»: Պահպանվել է հայերեն թարգմանությամբ հինգ գլուխ, ավելին՝ XIX դարում անգլիացի լեզվաբան Կոնիբերը թարգմանել է հայերենից հունա-

րեն և ավելացրել բնագրին:

Որոշ դեպքերում հայերեն թարգմանությունները շատ ավելի հին էին, քան արաբերենը լատիներենը: Նրանք հիմնականում արվել են ոչ թե բնագրից, ինչպես հայերենը, այլ կամ հայերենից կամ ասորերենից: Եվ դա է պատճառը, որ հայերեն թարգմանություններն առաջնակարգ տեղ են զրավում լատիներենի համեմատությամբ:

Հայ թարգմանիչների լեզուն և ոճը բացահայտում էին նրանց վերաբերմունքը անտիկ մշակույթի նկատմամբ:

Թարգմանիչները ջանում էին չշեղվել բնագրից, երբեմն, այսպես կոչված, տառացի թարգմանությունը հասնում էր ծայրահեղության: Կան թարգմանված տեքստերի օրինակներ, երբ հայոց լեզուն այնքան էր հելլենացված, որ թարգմանությունները պահանջ ունեին պարզաբանումների: Չափազանց մեծ է այդ թարգմանությունների նշանակությունը: Նրանք հնարավորություն տվեցին մայրենի լեզվով ուսումնասիրելու անտիկ մտածողներին, երկրում տարածելու նրանց գաղափարները և նպաստելու մշակութային զարգացմանը:

Գերմանացի հայագետ Ֆինկը մեր թարգմանչաց ծրագիրն արժեքավորում է որպես «մշակույթի գիտակցված փոխանցման գործընթաց»: Հայ ժողովուրդը մշտապես մեծաբել է հայ թարգմանիչներին: Նրանց պատվին յուրաքանչյուր տարի և դարեր շարունակ նշվում է «Թարգմանչաց տոնը»՝ բացառիկ երևույթ քաղաքակրթության պատմության մեջ:

շարունակելի

ԾՈՎԻՆԱՐ ՉԱԼՈՅԱՆԻ
Գեղագիտության պատմություն գրքից,
Պատրաստեց ԱՐՄԻՆԵ ԱՌՈՅԱՆԸ

ՏՊԱԿՈՐԻԹՅՈՒՆՆԵՐ ԸԼԱԿԿԿԿԻՑ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԻՑ

(Երեւանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի 100-ամյակի առթիվ)

4 առավել քան պահանջվում է և՛ կոմսերվատորիական պատրաստվածություն, և՛ մեղեդային կոմսերաստները ներքուստ զգալու կարողություն: Խոսելով Արամ Շենիկյանի մասին՝ անհմար է չհիշատակել նրա հունորի զգացումը, որ իր դրսևորումներն է գտել նաև նրա երաժշտության մեջ: Օրինակ՝ հենց «Վարիացիաները», թվում է, թե պիտի ավարտվեն քառածայն հզոր ակորդով, բայց դրանց փոխարեն ընդամենը մեկ կարճ նոտա է՝ ի հակադրություն նախորդող վիրտուոզության:

Իսկ խառը երգչախմբի համար գրված «Հավերժահարսի մեղեդին» (որը փայլուն կերպով կատարեց «Հովեր» երգչախումբը), իսկ թավջութակի և դաշնամուրի համար գրված «Մեռյալների թռիչք» պիեսը, իսկ մեծանվագ ջութակի համար «Պոենը», իսկ ջութակի, կլառնետի և դաշնամուրի համար մեկնասանի «Տրիոն» Արամի ստեղծագործական կյանքի, եթե թույլ տրվի այսպես անվանել, «*Sturm und Drang*» շրջանի գործերում հավասարապես առկա են և՛ հայկական մեղեդայնությունը, և՛ կատակային բնույթ ստացած պարային ռիթմեր, և՛ վիրտուոզ դաշնակային հնարավորությունների փայլուն (ես կասեի՝ անխմա) ցուցաբերում, և՛ կերպարների ակներև հակադրություն: Երիտասարդական անսպառ միայն, ըմբոստություն քարացող կարգուկանոնի դեմ և միաժամանակ նվիրվածություն՝ ահա ինչն է ինձ դուր գալիս Արամ Շենիկյանի և՛ երաժշտական ստեղծագործություններին, և՛ առհասարակ բնավորության մեջ:

Լիբանանահայ կոմպոզիտոր, դաշնակահար և ջութակահար Սևան Դարիբյանի ստեղծագործական դիմանկարը, եթե բնութագրելու լինեմ մի քանի բառով, յուրահատուկ է նախևառաջ առեղծվածայնությամբ՝ արևելյան մոգական կոլորիտով, հայկական ու արաբական հիմնավոր մշակույթների (մասնավորապես առասպելների) հաղորդած ոգևորությամբ: Այս առումով կցանկանայի հատկապես հիշատակել գործիքային երկերը՝ «Ֆանտազիա» ջութակի և դաշնամուրի համար, «*Conundrum*» («Առեղծված») պիեսն ու «*Faës & Faeries*» («Պայք եւ պայիկը») խորեոգրաֆիկ շարքը դաշնամուրի համար, «*Cedars*» («Մայրիներ») պիեսը լարային քառյակի համար... Այս ստեղծագործություններում ընդհանուր երաժշտական լեզվամտածողության հիմնական բնորոշ գիծը՝ առեղծվածայնությունն այնքան բնական կերպով է համդես գալիս, այնքան ինքնաբերական է, որ Սևանին առաջին անգամ ունկնդրողը արդեն պարզորոշ կարող է պատկերացնել արևելյան դիցական-առասպելային աշխարհը, ինչը կարևոր

և հաճելի մորություն է նաև հայ երաժշտական արվեստի համար: Պատահական չէ, որ Դարիբյանի մի շարք ստեղծագործություններ հասցրել են բարձր գնահատականի արժանանալ արևմուտքում, նույնիսկ ներառվել մի շարք հայտնի կատարող երաժիշտների նվագազանկում: Դրանից բացի՝ Սևանը ժամանակ առ ժամանակ հանդես է գալիս նույնքան միտիկ բանաստեղծական մանրասպտկերներով, որոնք մասն են կազմում «Ի վրանէ Ֆարադէի» ժողովածուի: Այսուհանդերձ ինձ համար զարմանալի է, որ մինչ օրս տպագրված են միայն «*Lustre*» և «*Moonlit night*» ռոմանսները, իսկ այդ հրատարակություններն իրենց հերթին ասես կատարող երաժիշտների համար նախատեսված չլինեն (խոսքս կազմման (*переплет*) մասին է): Հուսով եմ, որ Սևան Դարիբյանը չի հապաղի տպագիր եղանակով հրապարակ հանել իր մյուս ավարտուն ստեղծագործությունները ևս, և որ դրանք կտպագրվեն ու կթողարկվեն կատարողական օգտագործմանն առավել հարմար եղանակով:

Իմ հասակակից (և հայրենակից) ընկեր **Գոռ Իսպիրյանին** ճանաչում եմ դեռ դպրոցական տարիներից: Քանի որ ուսանողական շրջանում առիթ եմ ունեցել հետևել նրա երաժշտական ստեղծագործական փորձերին՝ ապշած եմ այն արագությունը և էֆեկտիվ ընթացքով, որ Գոռը ցուցաբերեց՝ անցնում կատարելով ակադեմիական ժանրերում կոմպոզիտորական գործունեությամբ: Դրանից բացի՝ բավականին զարմանալի արագությամբ ի հայտ եկան նրա մրցունակ դաշնակահարի և դիրիժորի ունակությունները:

Կոմսերվատորիայում կոմպոզիցիայի բակալավրիատում ուսանելու տարիներին նրա գրած և հրապարակած ստեղծագործությունները, համեմայն դեպս ինձ համար, դժվար է հասկանալ և գնահատել միանշանակորեն: Սկսած դաշնամուրային Տոկկատայից (*a-moll*), ինչը, ըստ իմ ստացած տպավորության, ներկայացնում է Իսպիրյանի ստեղծագործական ձեռագրի ձևավորման նախնական փուլը: Այս պիեսի կատարողական բարդությունը, որ տեղ-տեղ հասցնում է այն «*Perpetuum mobile*» մակարդակի, հասանելի է այն դաշնակահարներին, որոնց նվագազանկում մնայուն տեղ ունեն Շոպենի էտյուդները՝ մասնավորապես «Հեղափոխականը» (*Op.10, N 12*):

Անհանգիստ զգացմունքները, տրամադրությունների փոփոխականության անսպասելիությունը, աղապատացվածությունը հարմոնիկ ու մետրոռիթմիկ ոչ ավանդական մտածելակերպին՝ որպես Գոռ Իսպիրյանի ստեղծագործական ձե-



Մաթևոսի Ավետարան,
Կաթողիկոս Հակոբի դիմանկարը,
Սարգիս Պիծակի ինքնանկարը,
1338 թ. Գրիչ՝ Սարգիս Պիծակ,
Կիլիկիա, Հայաստան

Браво, Мастера!

1 С первых же прозвучавших фраз концерта возникло неодолимое желание поделиться своими впечатлениями. Однако, вначале об исполнителях. В Армении знают и уважают прекрасного виолончелиста, нашего соотечественника, Александра Чаушяна, который начав обучение в классах замечательных учителей в Ереване, с 14 лет продолжил образование у маститых музыкантов в Лондоне и Берлине; лауреата известных международных конкурсов и обладателя престижных премий (в числе которых отметим некоторые:

“Premio Mozart” (Верона, 1990), “International Music Competition” (Голландия, 1992) “Guilhermina Suggia Gift” (Лондон), 12-й конкурс им.П.И.Чайковского (Москва, 2002), конкурсе “International Musikwettbewerb der ARD” (Мюнхен, 2005), А.Чаушян живет в Лондоне и преподает в Королевском колледже, с недавних пор также в консерватории голландского города Маастрихт, гастролирует по всему миру в содружестве с выдающимися солистами, дирижерами и именитыми оркестрами. В настоящее время он является художественным руководителем музыкального фестиваля “Faros chamber music Festival” (Кипр), “Orfeus & Bacchus” (Бордо), Ереванского международного фестиваля (со-руководитель Эдуард Топчян). Фирма “BIS Records” выпустила диск “Армянская рапсодия” с участием А.Чаушяна и Национального филармонического оркестра Армении.

Ежегодно Чаушян приглашает своих талантливых друзей—музыкантов в Армению, обогащая музыкальную жизнь Еревана, освежая эмоциональные впечатления любителей классической музыки и, одновременно, знакомя интернациональный круг друзей со своей Родиной и ее народом, традициями. Примечательно, что А.Чаушян в эти насыщенные концертами дни успевает, как обычно он делает во время своих приездов в Ереван, дать мастер-классы виолончелистам.

Вот и в этот раз А.Чаушян пригласил пианиста Фредди Кемпфа и скрипачку Клару—Джуми Кан помузыцировать и “причинить” эстетическое наслаждение ереванцам.

Уроженец Лондона Фредди Кемпф (Германия) впервые вышел на сцену в возрасте восьми лет с Лондонским королевским оркестром (1985). Он лауреат престижных международных конкурсов: BBC Young Musician of the Year Competition (1992), им. П.И.Чайковского в Москве (1998), а в 2019 был членом жюри этого же конкурса. Имея огромный репертуар, Кемпф, представлял свое искусство в разных странах, выступая и с камерными программами в ансамбле с известными музыкантами, с лучшими оркестрами многих стран под руководством Ш.Дютуа, Э.Дэвиса, В.Савалиша, К.Зандерлинга, В.Ашкенази, Ю.Темирканова и других дирижеров (отметим, что последние годы Кемпф нередко выходит на сцену и в качестве дирижера). Примечательно, что в 2000 году Кемпф в содружестве со скрипачом П. Бенсайдом и виолончелистом А.Чаушяном организовал трио Kempf, участвующее в различных фестивалях камерной музыки в Европе и США. Ф.Кемпф осуществил запись произведений Баха, Бетховена, Шумана, Шопена, Равеля, Гершвина, Чайковского, Рахманинова, Прокофьева, Стравинского и других авторов, работая исключительно с фирмой “BIS Records”.

Скрипачка Клара—Джуми Кан (Южная Корея) родилась в семье музыкантов в Германии, впервые вышла на сцену в возрасте 5 лет с Гамбургским симфоническим оркестром. Она лауреат международных конкурсов в Индианаполисе, Сеуле (2009) и в Сендае (2010); училась в Мангейме, Любеке, в Мюнхене (Musikhochschule), в США (Julliard School), в Корейской национальной академии искусств. Выступала с сольными концертами, с симфоническими оркестрами под управлением именитых дирижеров в разных уголках мира. Прекрасный интерпретатор камерных произведений, Кла-

ра—Джуми Кан выступала с разными инструментальными составами, участвовала в престижных камерных фестивалях в Европе и Азии. Ее партнерами по сцене были Б.Березовский, Б.Бровцын, Э. Небольсин, Г.Кремер, М.Майский и другие. Отметим, что она играет на скрипке 1708 года “Ex-Strauss” Stradivarius, которая предоставлена ей Культурным фондом Samsung (Корея). Клара—Джуми Кан осуществила записи произведений Шумана, Шуберта, Брамса, Изаи на фирме Decca.

В Ереване состоялись два концерта: в день прибытия — Тройной концерт Бетховена с Национальным филармоническим оркестром Армении под управлением его художественного руководителя, заслуженного деятеля искусств РА Эдуарда Топчяна. Высокий профессионализм музыкантов покорила находящуюся в зале публику. Второй концерт — камерный, которому и посвящена данная статья.

Из пяти созданных Бетховеном Трио, к знаменитому сложнейшему трио “Archduke” (1.Allegro moderato, 2.Scherzo.Allegro, 3.Andante cantabile, 4.Allegro moderato-Presto) автор, по свидетельству современников, относился трепетно, впервые исполнив его в содружестве со скрипачом И.Шупанцигом и виолончелистом Й.Линке (сочинение было тепло принято современниками). В этом прекрасном произведении особенно богата фортепианная партия (общезвестно что, в Фортепианных трио основную нагрузку несет фортепиано), необходим и крепкий пианизм, и зрелое ансамблевое мышление. В условиях, когда успевают провести лишь одну репетицию, нужны опыт, мастерство и профессионализм. И в этом смысле закономерны мысли Ф.Кемпфа в интервью перед выступлением: “...Бетховен писал фортепианную музыку прежде всего для себя, чтобы потом и самому исполнить ее. Поэтому для пианиста исполнять Бетховена всегда волнительно, поскольку пианисты знают, что это написано для фортепиано и для них — от звучания до физических ощущений — всегда привлекательно и интересно”. Здесь хочется выделить игру Фредди Кемпфа — мастера-виртуоза в высоком смысле этого слова. Его исполнению присуща высокая культура преподнесения музыкального материала в широком понятии: богатство звуковой палитры, тончайшие оттенки от изысканных pianissimo до масштабных fortissimo, ровнейшая техническая база всех видов — от мелкой до крупной, вкус, логика и мысль в каждой фразе. Он осторожно и тонко “цементировал” творческий состав. И все это “богатство” служило для удивительно яркого, живого и, вместе с тем, академичного воплощения музыки гениальных композиторов без надрыва и манерности, без напыщенности и показа собственного “Я”. (Вспомнился давний случай на шопеновском конкурсе, когда один из конкурсантов подошел к члену жюри, известному профессору Московской консерватории Г.Г.Нейгаузу и поинтересовался тем, почему его игра не получила соответствующую оценку на конкурсе. Последовал ответ: “Вы мыслили так: “Я играю шопена”, а надо было мыслить: “я играю ШОПЕНА”).

Небольшая ремарка: когда приезжают музыканты такого уровня, хотелось бы, чтобы наши уважаемые руководители высших и средних музыкальных заведений имели договоренность с дирекцией Филармонии на предоставление абонементов для студентов и преподавателей.

Во втором отделении прозвучало двухчастное Трио



Тройной концерт Бетховена с Национальным филармоническим оркестром Армении (дирижер Эдуард Топчян)

П.И.Чайковского (1.Pezzo elegiac.Moderato assai 2.Thema con variacioni. Variacione finale e Coda. Allegro risoluto e con fuoco). Примечательно, что сам автор какое—то время скептически относился к идее одновременного звучания этих трех инструментов, однако, начав работу над Трио, он нашел свой язык разговора с этими инструментами (произведение впервые прозвучало в исполнении С.Танеева (фортепиано), И.Гржимали (скрипка) и В.Фитценгагена (виолончель). Под конец работы, оно полюбилилось и самому создателю. Здесь раскрыт неиссякаемый талант Чайковского, с его романтизмом и русскими интонациями, масштабностью звучания и присущими его музыке кантиленами, здесь и fuga, и торжественный полонез, и похоронный ритм...

Гениальная музыка Трио предоставляет возможность полностью раскрыть индивидуальность и пианиста (сложнейшая партия, как обычно бывает у Чайковского), и скрипача, и виолончелиста, что замечательным образом, порою с улыбкой, и продемонстрировали все трое участников исполнения. Казалось, они и сами получали удовольствие от совместного музицирования.

Вечер удался! Музыканты, достойные друг друга, восхитили искушенную публику настоящим ансамблевым мастерством: необычайно чутким единением эмоциональных порывов, филигранным контролем звукового баланса, моментальным реагированием на любые намерения партнеров, особенно в быстрых частях, уважением к замыслу и драматургии произведений великих композиторов. Все трое прежде исполняли эти Трио с разными партнерами. Но здесь и сейчас они “собрали” свое вщдение и слышание в одно целое, доверились друг другу и у них это получилось удивительно гармонично.

Восхищенная и благодарная публика стоя, с возгласами “bravo” аплодировала Мастерам. Думается, это было для артистов эмоциональной поддержкой, вновь обретенным ощущением насущной необходимости духовной пищи, которую они в состоянии вновь и вновь с любовью дарить людям, надеждой на возобновление той активной концертной и гастрольной среды, в которой они привыкли жить и творить. В психологически трудное послевоенное время это был незабываемый праздник и для публики, и для исполнителей. Браво, Мастера!

САЕНИК МАГАКЯН,
пианистка,
профессор Ереванской
консерватории им.Комитаса

«ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅՏԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Փետրվարի 15-ի վաղ առավոտյան, երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիան հյուրընկալել էր Հաղորդի արվեստի դպրոցի շրջանավարտներին և ուսուցիչներին: Հանդիպումը նախաձեռնել էր Օպերային ստուդիայի տնօրեն՝ Հայկ Վարդանյանը, ով պատերազմից առաջ համերգային ծրագրով և վարպետաց դասերով Արցախում էր. հասցրել էր ծանոթանալ դպրոցի և նրա սաների հետ: Հաղորդից հյուրերը շրջեցին կոնսերվատորիայի շենքով: Հայկ Վարդանյանը շրջայցի ընթացքում նրանց ներկայացրեց Կոնսերվատորիայի գրադարանը՝ իր հարյուրամյա պատմությամբ, հիշատակեց դիրիժոր և ջութակահար Կոնստանտին Սարաջևի մեծ ավանդի, ինչպես նաև թվային գրադարան ստեղծելու ծրագրերի մասին: Պարոն Վարդանյանի խոսքով՝ գրադարանի 200.000-ից ավելի մուշկերի թվայնացումը հնարավորություն կտա կոնսերվատորիայից դուրս գտնվող երիտասարդներին ևս օգտվել այս գիտելիքի պահոցներում գեներված թանկարժեք երաժշտական գրականությունից, հենց Կոնստանտին Սարաջևի անձնական պար-

տիտուրաներից և այլ նյութերից: Այնուհետև բոլորը բարձրացան 3-րդ հարկ՝ ծանոթանալու ԵՊԿ ակուստիկ լաբորատորիային: Շրջայցի ավարտին հյուրերին ներկայացվեց Օպերային ստուդիայի դահլիճը: Հենց այնտեղ էլ արվեստի դպրոցի տնօրենը՝ Տաթևիկ Սկրտչյանը շրջանավարտներին հանձնեց իրենց վկայագրերը, ինչը պատերազմի հետևանքով անհնար եղավ անել Հաղորդում:

Խմբագրական



Լուսանկարը՝ ԹԻՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

Երևանի պետական կոնսերվատորիա հյուրընկալել էր Հաղորդի արվեստի դպրոցի աշակերտներն ու ուսուցիչները

ԿՈՌՅԱՆՆԵՐԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳԵՐԴԱՍՏԱՆԸ

Կարևոր է նաև այն, որ երաժշտական աշխարհի ներկայացուցիչները, ովքեր մեր գրույցների ռեսպոնդենտներն են, սովորել են ԵՊԿ ծաղկուն շրջանում և ուսանել, կամ շփման լայն եզրեր են ունեցել խորհրդային շրջանի առաջնային դպրոցների՝ կոմպոզիտորական, լարային, դաշնամուրային, ֆուլկորի, ազգային, վոկալի կարկառուն դեմքերի հետ, ինչն ամերկբա մեծ ազդեցություն է ունեցել նրանց հետագա գործունեության վրա: Հոգվածաշարի հյուր արվեստագետներից յուրաքանչյուրն իր

նությունը, այնուամենայնիվ Մարգար Մարգարյանը, Լևոն Մադոյանը և Կարո Չարչոլյանը (Չարչոլի Կարո) մնացին բոլոր սերունդների դուդուկահարների ուսուցիչն ու նրանց առաջնորդողը:

Վլադիմիր Կոռյանը միշտ ականծանքով է պատմել, որ բախտ է ունեցել լսելու հանճարեղ դուդուկահարների նվագը: Նվիրյալ դուդուկահարը ժամերով լսելուն էր նրանց ծայնագրություններն ու ամեն անգամ իր համար նորանոր գաղտնիքներ բացահայտում: Հետագայում, Վլադիմիր Կոռյանը հպարտորեն նրանց իր ուսուցիչը հռչակեց, ինչն իրական էր ու ճշմարիտ, քանի որ կրթական որևէ օջախ չկար, որտեղ ազգային գործիքների տիրապետել սովորեցնեին: Վարպետ Լադոն, ինչպես նրան մեծարում էին շրջապատում, սերտ կապերի մեջ էր Ա. Մերանգուլյանի անվ. ժողովրդական գործիքների անսամբլի մենակատարներ՝ Վաչե Հովսեփյանի և Սերգեյ Կարապետյանի (Լալիկ) հետ, հաճախակի շփումներ ուներ երկրի մյուս շրջանների դուդուկահարների ու երաժիշտների հետ: Այսպիսի անխոնջ աշխատասիրությունն ու մեծ սերը դեպի ազգային նվագարանը, տվեցին իրենց պտուղները: Տարեցտարի ընդարձակվեցին դուդուկահարի կատարողական ու ստեղծագործական շրջանակները: 1949 թ., Երևանում Հանրապետական

միր Կոռյանի սաները հանրապետությունում հայտնի դուդուկահարներ են, մանկավարժներ, և պատահական չէ, որ նրան անվանում են Լոռվա մարզի դուդուկահարների ուսուցիչ:

Վաստակավոր դուդուկահարն իր թոռան՝ կրտսեր Վլադիմիր Կոռյանի ուսուցիչը դարձան նաև: Չնայած երիտասարդ տարիքին, թոռը կարծես չի ուզում ետ մնալ տաղանդավոր պապից, ում անունն այժմ պատվով է կրում: Ոչ պակաս տաղանդավոր թոռը, որ հանրապետական մի շարք մրցույթների դափնեկիր է, հավատարիմ է փոխանցած ավանդույթներին, դուդուկն արժանիորեն ներկայացնում է ոչ միայն Հայաստանում, այլև աշխարհի բազմաթիվ երկրներում:

ԷԼՄԻՐԱ ՎԼԱԴԻՄԻՐԻ ԿՈՐՅԱՆ

Դաշնակահար, պարուհի, քանոնահարուհի Էլմիրա Կոռյանը գերդաստանի միջին սերնդի վառ ներկայացուցիչն է: Գեներով փոխանցված երաժշտական ունակությունների առկայությունն այնքան ցայտուն էին, որ ծնողները մասնագիտական այլ բնագավառում չէին պատկերացնում նրան: Նա, արվեստի որ ճյուղում էլ փորձում էր իրեն, հաջողության էր հասնում: Սակայն նախնական երաժշտական կր-



Էլմիրա Կոռյան

Էլմիրա Կոռյան՝ մենապարող

Վլադիմիր Կոռյան կրտսեր (թոռը)

օժտվածությամբ ու մարդկային հատկանիշներով վառ անհատականություն է, բարձր կուլտուրայի՝ երաժշտարվեստի կրող և դաստիարակող՝ յուրօրինակ ներկայացուցիչ:

Առիթմ օգտագործելով նրանք պատմում են նաև այդ Մեծերի կյանքից հետաքրքիր դրվագներ, ինչը յուրատեսակ լույս է սփռում նրանց կերպարի ճանաչողության վրա: Կարծում են երիտասարդ սերնդին շատ կհետաքրքրի և ցանկությունն է, որ հոգվածաշարի ընթերցողը դառնալուց հետո, նրանք իրենց հետաքրքրող արվեստագետի մասին լուսաբանման խնդրով դիմեն խմբագրություն, ինչից հետո հաջորդիվ համարներում կկարդան հուզող հարցերի պատասխանները: Հոգվածաշարում արդեն համրաճանաչ արվեստագետների շարքում ցանկալի կլինի լուսաբանել նաև երիտասարդ, սակայն արդեն կայացած ստեղծագործողների, ովքեր հասցրել են իրենց գործունեությամբ որևէ կերպ նպաստել հայ երաժշտարվեստին, սակայն անպայման պահպանելով «ճանաչենք միմյանց» հոգվածաշարի չափորոշիչները:

Մարդը երբևէ չի կարող պատկերացնել, թե ճակատագրի բերումով և աշխարհագրորեն որտեղ կարող է հայտնվել: Կյանքի այս նխապայմանը ցավոք հաճախ գործել է մեր նախնիների կյանքում, ովքեր անկախ իրենց կամքից տեղահանվել են՝ մեղմ ասած դժվարին կյանքով են ապրել:

Երբ արվեստագետներն սկսում են պատմել իրենց մասին, ապա նրանց պապերի պատմություններն սկսվում են կամ գաղթի, կամ Հայոց եղեռնի ժամանակներից:

Հերթական հոգվածն ներկայացնում է հանրապետությունում ծանաչված՝ Կոռյանների երաժշտական գերդաստանի վառ ներկայացուցիչներին:

ՎԼԱԴԻՄԻՐ ՆԵՐՍԵՍԻ ԿՈՐՅԱՆ

Կոռյանների նախնիներն Էրզրումից ու Ղարսից Արևմտյան Հայաստան են եկել 1800-ական թվականներին: Հինգ եղբայրներից երեքը հաստատվել են Ղարաբախում (Կիրովական) այժմ՝ Վանաձոր, մյուսները՝ Գուգարքում, Սևանի ավազանում: Երաժիշտ գերդաստանի արարումը շարունակվեց Լոռվա աշխարհում, ուր նրանք հայտնի դարձան իրենց աշխատասիրության, երաժշտական տաղանդի ու արվեստին անմնացորդ նվիրումի շնորհիվ: Նոր միջավայրում, երգի հետ կապված միակ հիշողությունն իրենց հետ բերած գործիքներն էին: Այստեղ նրանք դարձան Լոռվա ընտանիքների խնջույքների ու հարսանիքների ամենասիրված հյուրերը, որոնց շնորհիվ ամեն մի արարողություն վերածվում էր ազգային երգ-երաժշտության տոնի: Հանճարների օրրան Լոռին, բարեբեր եղավ նաև նրանց համար, դարձավ հարազատ: Չնայած նրանք անխտիր որևէ գործիքի տիրապետում էին, սակայն հատկանշական է, որ յուրաքանչյուր սերունդ ունեցավ իր փայլուն ներկայացուցիչը, ինչի շնորհիվ Ղարաբախում, այնուհետև Լոռվա աշխարհում՝ հայտնի դարձան: Գերդաստանի մեծը, դարսեցի Ներսես Կոռյանը, դուդուկ և գուռնա էր նվագում: Նա Գարեգին Նժդեհի զինվորներից էր, հայրենասեր ու պատվախնդիր մարդ, Ղարսի, Ջանգեզուրի կռիվների մասնակից:

Որպես երաժշտական ընտանիք, հատկապես աչքի ընկավ գուռնաչի Ներսես պապի տղայի՝ հետագայում արդեն հանրապետությունում հայտնի դուդուկահար՝ Վլադիմիր Կոռյանի ընտանիքը, ով իր համար մի նոր աշխարհ բացեց, շփվելով դուդուկի վարպետ նախնիների՝ Կարո Չարչոլյանի (Չարչոլի Կարո) և Լևոն Մադոյանի արվեստի հետ: Չնայած դուդուկը բեմ «բարձրացրեց» դուդուկահարների աստղաբույլի մեկ այլ ներկայացուցիչ՝ Վաչե Հովսեփյանը, ով նոր գունապնակով ու տեխնիկական հնարքներով հարստացրեց ազգային պարծանք դուդուկի կատարողակա-

օլիմպիադայում, երիտասարդ դուդուկահարն արժանացավ առաջին կարգի դիպլոմի և ժյուրիի նախագահ Թաթուլ Ալթունյանի հրավերով աշխատանքի ընդունվեց Հայաստանի երգի պարի պետական անսամբլ (հետագայում՝ Թաթուլ Ալթունյանի անվան): Սակայն վեց ամիս աշխատելուց հետո, նա ետ վերադարձավ և գործունեությունը շարունակեց հայրենի բաղնիքում: 1958 թ. Մոսկվայում կայացած Համամիութենական օլիմպիադայում արժանացավ Ոսկե մեդալի և դափնեկրի կոչմանը: Նրա համառ ջանքերով հիմնադրվեց Ղ. Ղուկասյանի անվ. մշակույթի տան ժողովրդական գործիքների անսամբլը, Կամոյի անվ. տրիկոտաժի ֆաբրիկայի երգի պարի անսամբլը, եղել է՝ քիմիագործների պարի անսամբլի գործիքային մասի ղեկավարը, Գուգարքի շրջանի մշակույթի տան ժողովրդական գործիքների անսամբլի ղեկավարը, ապա տնօրենը: Դուդուկահարը շրջագայել է արտերկրում՝ Լեհաստան, Ռումինիա, Հունգարիա, Բուլղարիա, Ֆրանսիա, արժանիորեն ներկայացրել հայ երգը: Սիրած մասնագիտությանն անմնացորդ նվիրումի համար նա բազմաթիվ շնորհակալագրեր ու պատվոգրեր է ստացել, իսկ 2008 թ. պարգևատրվել է ՀՀ մշակույթի նախարարության Ոսկե մեդալով: Սակայն, ինչ հաջողությունների ու պարգևների էլ հասավ Վլադիմիր Կոռյանը, միևնույն է նրա համար մեծարժան մեծագույն չափանիշը ժողովրդի սերն էր, որ մինչև այժմ չի մարել: Վանաձորցու համար այսօր էլ, Մեծ երաժշտի համբավ ունեցող Վարպետ Լադոն՝ լավագույն դուդուկահարի չափանիշ է:

Վլադիմիր Կոռյանը Կիրովականում դուդուկահարների մի քանի սերունդ դաստիարակեց: Նա Կիրովականի թիվ մեկ երաժշտական դպրոցի դուդուկի դասարանի հիմնադիրն է, դուդուկ և շվի է դասավանդել Մ. Թավրիզյանի անվ. երաժշտական ուսումնարանի ժողովրդական գործիքների բաժնում: Նրան իրավամբ կարելի է համարել երաժշտարվեստի անխոնջ մշակ, քանզի նրա վաստակն իրապես անգնահատելի է որպես դուդուկահար և մանկավարժ: Վլադի-



«...», Ներսես Կոռյան, «...», (Գարեգին Նժդեհի Ղարաբախիցի զինվորներից)



Ղյան Անահիտ, Էլենիմա Կոռյան, Էլմիրա Կոռյան, Ազնիվ Մինասյան, Խաչատուր Ավետիսյան, <...>, Վլադիմիր Կոռյան, Անահիտ Հովսեփյան, Անահիտ Մելքոնյան, Նոնա Սոֆյան (Էլմիրա Կոռյանի կրտսեր դուստրը)

թությունը ստացավ մոր հորդորով:

Էլմիրա Կոռյանի ծնողները ծնունդով դարաքիլիսեցի են: Հայրը՝ վաստակաշատ դուդուկահար Վլադիմիր Կոռյանը և մայրը՝ դաշնակահարուհի Էմմա Մխիթարյանը, հանդիպեցին ու ամուսնացան իրենց ծննդավայրում:

Էմմա Մխիթարյանը, թիֆլիսահայ կոմպոզիտոր՝ Էդվարդ Գերասիմի Կզարթմյանի, մոր քսած թիվ մեկ երաժշտական դպրոցի՝ դաշնամուրային բաժնի առաջին շրջանավարտներից է, սովորել է ազգությամբ գերմանացի՝ Մարիա Պլեցկայայի դասարանում:

Ղարաքիլիսան դարձավ մորաստեղծ ընտանիքի օրրանը: Վլադիմիր Կոռյանը, որ այդ տարիներին (1960-ական թվականներ) Կիրովականի Քիմիագործների կուլտուրայի պալատի (մշակույթի պալատ) Պարային անսամբլի գործիքային մասի ղեկավարն էր (պարուսույց՝ Կառլեն Համբարձումյան), մշտապես համերգային շրջագայությունների մեջ էր: Նրանց հարկի տակ անպակաս էին հյուրերը, խնջույքներն ու երաժշտական հանդիպումները, հաճախ էլ պատահում էր, որ փորձերը տանն էին անում: Երիտասարդ երաժիշտների բազմազավակ ընտանիքում մեծանում էր չորս երեխա, ու բոլորովին պատահական չէր, որ նրանցից երեքը ստացան երաժշտական կրթություն:

Դասական ու ազգային երաժշտության այս միջավայրում ձևավորվում էր մի ճաշակ և որակ, որտեղ ազգայինը դառնում էր առաջնային՝ իր ինքնատիպ, սակայն նորովի մեկնաբանումների շնորհիվ: Այս ամենի վրա իր դրոշմն ուներ նաև մայրաքաղաք Երևանում գործող հայտնի պետական կոլեկտիվների ազդեցությունը, որոնք ղեկավարում էին ժամանակի հանճարեղ երաժիշտներ ու կոմպոզիտորներ՝ Թաթուլ Ալթունյանը, Արամ Մերանգուլյանը, Էդգար Հովհաննիսյանը, Խաչատուր Ավետիսյանը, Ալեսանդր Ալեքսանդրյանը, Մանվել Բեգլարյանը և այլք:

Անսպասելի չէր, ոչ էլ պատահական, որ մի օր դուդուկահար հայրն ավագ դստերը՝ Էլմիրային առաջարկում է քանոն նվագել սովորել: Մոր խորհրդով, Կզարթմյանի անվ. երաժշտական դպրոցի դաշնամուրային բաժնի ավարտած աղջնակը, որ մանկուց ականջալուր էր եղել ազգային երգի ու պարի հնչյուններին՝ համաձայնեց, մասնավոր, որ հենց սկզբից նրան հրապուրեց քաղցրահունչ գործիքի ձայնը: Տասներեք տարեկան էր, բայց արդեն պարում էր քիմիագործների կուլտուրայի պալատի Պարային անսամբլում: Պարի առաջին ուսուցիչը հորաքրոջ աղջկն էր՝ Ռեբեկա Հարությունյանը, ով այնու-

Նորարուխ պոետի մուսֆը դեպի գրականության անեպր աշխարհ

Երանելի է քեզ ունենալը, որ բաց չմնա ոչ մի վանդակ, որ լրացնես դրանք քո տողերով, որ արանքներում ցավ չմնա, երազներում մաղձ չմնա: Կարդալ քեզ, լցվել քո լույսով, որն այնքան պարզ է, ինչպես քո պատկերն է բնորոշ օրվա ժամին, առանց ավելորդ ջանքի ու արհեստականության:

Հայկ Սիրունյանը ծնվել է դարավերջին՝ 1999 թ. ու կարծես մեզ հասած վերջին մոհիկանը լինի նախորդ դարի պոետիայից: Ժամանակակից մեր սերնդակիցը, ով միևնույն ժամանակ գնալով հոսանքին հակառակ պահում է պոետիայի ամբողջ բույրը, չի աղավաղում, չի լցնում այն ամեն տեսակ թափոնով այլ իր անաղարտ լեզվով կարծես մի ճրագ, լուսավորում է մեզ այս դառը և սին մթության հորձանուտում:

Չնայած իր երիտասարդ տարիքին, Հայկն արդեն գրքի հեղինակ է, նրա անդրամիկ գրքի շնորհանդեսը տեղի ունեցավ Թումանյանի ծննդյան օրը՝ փետրվարի 19-ին:

«Ադամամուր», այսպես է անվանել երիտասարդ գրողը իր բանաստեղծությունների և էսսեների ժողովածուն, որն է արշալույսի աղջամուղջը: Ինչպես նշում է Ա. Բակունցը «Լուսաղենին խավարն է՝ ադամամուրը, այն ժամը, երբ թանձր խավարից ճառագայթում է լույսը»:

Եվ իսկապես, Հայկի բանաստեղծությունները կարծես այս սին և խավար աշխարհում ճառագող լույս լինեն, հույս և հավատ, որ մորից բացվելու է Հայոց աշխարհի հերոսական գարունը...

Բանաստեղծը (ինչպես բնորոշում է նրան իր գրքի խմբագիր Սերժ Սրապիոնյանը չերկմտելով, չնայած նրա երիտասարդ տարիքին, տալ նրան այդ կոչումը) գրքում ընդգրկել է իր խոհերը, զգացմունքներն ու իդեները՝ հյուսելով դրանց իրեն հատուկ պոետիկ երանգները:

Հայկ Սիրունյանը XX դարի մեր նշանավոր գրող Դուկաս Սիրունյանի որդին է: Նա կարծես հորից ժառանգել է գրչի այն թեթևությունը, որով թղթին է հանձնում իր մտքերը:

Ինչպես գրքի առաջաբանում Հայկին նկարագրելիս Ս. Սրապիոնյանը գրում է «...Նա որդին է XX դարավերջի հայոց բանաստեղծության մեր ինքնատիպ դեմքերից մեկի՝ Դուկաս Սիրունյանի: Նա ծնվել է բանաստեղծից և հասակ է մետել «գրքերի՝ ամեզր տիեզերքի աշխարհում»: Այդ գեներթծվել է հայոց էպիզմի՝ Սասնո աշխարհի միջակայան բարայրում, ուր կենցաղն ու հերոսականությունը գոյավորվում ու տևում են ո՛չ կողք կողքի, այլ գիրքընդխառն՝ ներծույլ: Իսկ եթե դրանց երջանիկ օրինաչափությամբ, այսինքն՝ Սստծո կամոք միանում են նաև անչափելի սերն առ մարդն ու հայրենին և երևակայությունը, ապա անխուսափելի է դառնում բանաստեղծի ծնունդը: Սրանից ձևավորվել է բա-



Հայկ Սիրունյան

հետքը կթողնի հայ գրականության երփնավոր աշխարհում: Ձեր դատին ենք հանձնում բանաստեղծի «Ադամամուր» գրքի որոշ ստեղծագործություններ:

Առանց քեզ, քո պատրանքի
Քայլիդ բերած քնքուն՝ չ հովի՝
Օրը օր չէ, ժամը ժամ չէ.
Արտաշունչ է, ակնթարթ է բեկումնի,
Մագ-մորուքի աճ է հիմար,
Ուրիշ ոչի՛նչ, ուրիշ ոչի՛նչ...
Երբ դու չկաս՝ վերս վար է, աջս ձախ է,
Աշխարհն է խորթ՝ սրտապատառ գլուխկոնծի:
Երբ դու չկաս՝ միտքս շփոթ բաբելական,
Սիրտս՝ օրի դանդաղ չկաթ՝
Հուզական անոթներովս մեկ
Նյարդենյա՛րող, նյարդենյա՛րող...
Երբ դու չկաս, ու առանց քեզ
Ես... մատնված մի դատապարտ,
Ես... վճռաբեկ ու գլխահակ՝
Քայլերիդ մենահատ փամփուշտների
Ձգձգումից
Գնդակահա՛ր, գնդակահա՛ր...

Չսիրել քեզ, քե՛զ չսիրել, ասել է թե՛
թիկունքով կանգնել
պայթող ծաղկունքի բորբոքումին,
և շնչել եռացող բույրը նրանց
հպանցի՛կ, վախվորա՛ծ՝ անոթի պես անուշադրի:

Կողքովդ անցնել աննկատ՝
չդիպչելով բամբակե ստվերին
քո,

ասել է թե՛
փչել-ցնորել աներազանք
խատուտիկի լամպե գլուխը
նուրբ...

աննկատ անցնել - տորթել խա-
տուտիկը

և մեղանչել պարզության դեմ մո-
գնումի:

Տեսնել քեզ, քե՛զ տեսնել և չսի-
րել,

չերագել քո հեքիաթը
օգոստոսյան առավոտի պես հուսալի ու ապրեցնող,
ասել է թե՛
թերթել կատալոգը «կյանք» հորջորջումի
զույգ-զույգ, անտարերք,
մնացյալ օրերը չիչելու, անտեսելու պես
մեքենայաբար:

Օր չէր՝
Քամուց ցնորվող խատուտիկի
Թավշյա գլխարկ էր, ոչ թե
Հասարակ, ցանցառ մի կիրակի,
Որ անցավ քրքրոտ հրձվանքի
Կամ ռոպեական թախծության նման...
... օրերի հավիտյանս գլուխկոնծու մեջ
Ուրիշ էր, ինչպես մանկուկների պարսի մեջ
Քո մանկան բզզոցն է ուրիշ...
...ես գրկեցի քեզ, առա կրծքիս հաղթական՝
Հուր մագերիդ մեջ երեսս թաղելով, ու
Ու դու իմն էիր, իմը, ինչպես երբևէ,
Ես էլ քոնը՝ անուշ-ազգանվանդ պես...
Քեզ առա գիրկս ու քանդակեցի հավիտյանս
Ցնորող ռոպեները,
և դաջվեց իմ մեջ ցանցառ մի կիրակի,
որ օր չէր, այլ քամուց ցնորվող խատուտիկի
թավշյա գլխարկ
օրերի գլխապտույտ, գլուխկոնծի դաշտերում:

ԱՆԻ ԳԱՐՐԻԻԵՆԱՆ

ԵՊԿ երաժշտագիտության բաժնի 2-րդ կուրս

ԿՈՌՅԱՆՆԵՐԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳԵՐԴԱՍՏԱՆԸ

7 հետև Հայաստանի Ռադիոյի ծայնադարանի վա-
րիչն էր:

Տասնվեց տարեկանում Էլմիրա Կոռյանին վա-
տահվեցին շատ պատասխանատու մենապարեր՝
ժողովրդական պար «Ուզունդարա», Ալեքսանդր Ալեք-
սանդրյան «Նաիրյան աղջկա պար», ժողովրդական պար
«Շալախո», Վլադիմիր Ոսկանյան «Գիշեր ու ցերեկ», վրա-
ցական պար «Լեռնային» և այլն:

Կյանքն իր հունով գնում էր ու Էլմիրա Կոռյանին տա-
նում նախախնամությամբ նախատեսած ճանապարհով,
թույլ չտալանով նրան նախապես որ է բան կանխորոշելու:

Երաժշտական դպրոցի դաշնամուրային դասարանը գե-
րազանցությամբ ավարտում, այնուհետև ընդունվում է Մ.
Թավրիգյանի անվան երաժշտական ուսումնարանի նորա-
բաց ժողգործիքների բաժնի քանոնի դասարան:

Սպիտակի երաժշտական դպրոցի քանոնի դասարանի
առաջին ուսուցիչն է (1969թ.), 1971-ից աշխատում է երաժշ-
տական ուսումնարանում (այժմ՝ արվեստի պետական քո-
լեջ), որպես քանոնի դասախոս, միևնույն ժամանակ ղեկա-
վարելով ժողգործիքների նվագախմբի դասարանը: Այս
ամենին զուգահեռ Էլմիրա Կոռյանն աշխատում էր հոր՝
Վլադիմիր Կոռյանի ղեկավարած անսամբլներում՝ որպես
մենապարուհի, ամիրաժեշտության դեպքում որպես քանո-
նահարուհի, հաճախակի շրջագայությունների մեկնում:

Սակայն շնորհաշատ պարմանուհին որոշեց իր ուժերը
փորձել ավելի դժվար բնագավառում: 1976-ից սկսեց ղեկա-
վարել թիվ 3 մշակույթի տան ժողգործիքների նվագախում-
բը, հետո Կիրովականի ներքին գործերի բաժնի, այնուհետև
ճշգրիտ հաստոցների գործարանի նվագախմբերը, իսկ հե-
տո դարձավ Ս. Շահումյանի անվան կարի ֆաբրիկայի երգի
պարի անսամբլի գործիքային մասի ղակավարը:

Եթե հարցնելու լինենք, թե բազմակողմանի գործունեու-
թյան՝ կատարողական, մանկավարժական, թե երաժշտա-
կան մյուս գործունեության ո՞ր ճյուղն է գերադասում Էլմի-
րա Կոռյանը, նա չի կարողանում առավելություն տալ որևէ
մեկին: Հավասարապես տիրապետելով ու արժևորելով յու-
րաբնյուրին, նա մշտապես առանձնացել է իր պատասխա-
նատվությամբ, ազգային երաժշարվեստի «բառ ու բանի»
նկատմամբ զգուշավորության, ճաշակի ու կատարողական

վարպետության նկատմամբ խստապահանջությամբ:

Տարիները փորձառություն էին բերում, հարստացնում
գիտելիքները, ցանկություններն ու ծգտումներն էլ նրան բե-
րեցին Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա:
Հանդիպումն անվանի կոմպոզիտոր, կոնսերվատորիայի
ժողգործիքների ամբիոնի վարիչ՝ Խաչատուր Ավետիսյանի
հետ (պրոֆեսոր, ՀՍՍՀ ժողովրդական արտիստ), որոշակի-
որեն փոխեց նրա աշխարհայացքը: Էլմիրա Կոռյանը կոն-
սերվատորիայում, Խաչատուր Ավետիսյանի և Անժելա Աթա-
բեկյանի (քանոնահարուհի, պրոֆեսոր, ՀՍՍՀ ժողովրդա-
կան արտիստ) ղեկավարությամբ մասնագիտական որակա-
վորման դասընթացներ է անցնում: Դրանից հետո սերտա-
ճող հարաբերությունների արդյունքում, Կոռյանը դառնում է
նրանց մտերիմ բարեկամը: 1990 թվականից Կիրովականի՝
«Հորովել» երգի պարի պետական անսամբլի գործիքային
մասի ղեկավարն էր, այնուհետև գեղարվեստական ղեկա-
վարը: Աշխատել է նաև Վանաձորի մանկավարժական ինս-
տիտուտում, ղեկավարել է երաժշտության ամբիոնի ժող-
գործիքների անսամբլը: 2008 թվականից, Հայաստանի պա-
տանի երաժիշտ կատարողների «Նոր անուններ» ասոցի-
ացիայի Վանաձորի մասնաճյուղի պատասխանատուն է: Մի
շարք փառատոների մրցանակակիր է, պարգևատրվել է ՀՀ
մշակույթի նախարարության Ոսկե մեդալով (2012 թ.), իսկ
ՀՀ մշակույթի վաստակավոր գործչի կոչմանն արժանացել է
2019 թվականին:

Բազմաբեղուն երաժիշտ մանկավարժը, ցայսօր էլ մա-
կավարժությունը զուգակցում է արդեն 47 տարվա կենսագ-
րություն ունեցող՝ «Հորովել» երգի պարի պետակն անսամբ-
լի բարդ ու տարօրոնակ աշխատանքներին: 1990 թվակա-
նից մինչև հիմա՝ անսամբլի գործիքավորումների հեղինակն
է: Ազգանվեր գործ էր նաև, մասնակցությունը՝ Գուսան Ջա-
բարյանին նվիրված (Սարգիս Ջաբարյան) երգերի ժողովա-
ծուի աշխատանքներին (2003 թվական): Երգերի հավա-
քագրումը բարդ աշխատանք է, սակայն նա կարողացավ ոչ
միայն հաղթահարել առաջացող խոչընդոտները, այլև, Գի-
տության և կրթության նախարար ու գրքի հովանավոր՝ Սեր-
գո Երիցյանի խնդրանքով նոտագրեց դրանք: Այնուհետև,
դրանց «կենդանի շունչ տալու» համար, այդ երգերին մա-
խանվագ ու միջմանավագ գրեց, գրքին կցված ծայնասկա-

վառակն (CD) ամբող-
ջացնելու համար:

Չնայած մի շարք ան-
գամներ Երևան տեղա-
փոխվելու հրավերներ է
ստացել, սակայն հարա-
զատ քաղաքը թողնելու
ցանկություն երբեք չի ու-
նեցել: Վերը թվարկած
բուռն գործունեության
հետ զուգահեռ Էլմիրա
Կոռյանը մինչև այժմ սի-
րելի ծննդավայրում
զբաղվում է մանկավար-
ժությամբ: Նրա դաստիա-
րակած սաներն աշխատել
և այսօր էլ աշխատում են
հանրապետության երաժշտական դպրոցներում, քոլեջե-
րում, բարձրագույն բուհերում ու պետական կոլեկտիվե-
րում, որոնցից մեկը տողերիս հեղինակն է: Մանկավարժ Էլ-
միրա Կոռյանին հատուկ է բարձր պրոֆեսիոնալիզմը, մայ-
րական հոգածությունը, վաղվա արժանի քաղաքացի դաս-
տիրարակելու յուրօրինակ ունակությունը: Իսկ ընդհանրա-
պես, նրա գործունեության խթանիչ ուժը սերն է ու պատաս-
խանատվությունը՝ ազգային երգ-երաժշտության, իր նախ-
նիների ու իրեն հուսացող երիտասարդների նկատմամբ,
ովքեր վաղվա հայ երաժշտարվեստի կրողներն են:

Ժողովուրդն արժանիորեն իր պատմության պահոցում
սիրով ու գորովանքով պահել գիտի արժանիների: Կոռյան-
ների բազմավաստակ գերդաստանի երաժշտական շավիղն
արդեն դարերի պատմություն ունի, իսկ նրանց առանձնա-
հատկությունները՝ ի վերուստ օժտվածությունն ու անմնա-
ցորդ նվիրումը, ազգային երաժշտարվեստին շարունակա-
կան երթի հերթական ապացույցն է:

ԱՆՈՒՇ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

քանոնահար, լրագրող, խմբագիր,
ՀԺՄ անդամ



Վլադիմիր Կոռյան

Նվիրվում է ՀՀՍՆ հիմնադրման 15-ամյակին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՍԻՄՖՈՆԻԿ ՆԿԱԳԱՆՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՄԱԿԱՐԱԿԻ ԵՒ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ
Հարցազրույց ՀՀՍՆ տնօրեն Սարգիս Բալբաբյանի հետ

1 Քանի որ նվազախումբն ունի ավելի քան 300 ժամ թվային արխիվ, համերգների տեսաձայնագրություններ, ինչպես նաև առանձին աուդիո ձայնագրություններ, մենք կարողացանք յուրաքանչյուր շաբաթ մեկ համերգ ներկայացնել և այդպիսով ապահովել սոցիալական տիրույթներում նվազախմբի ակտիվությունը և լրացնել այն մշակութային բացը, որը ձևավորվել է համաճարակի պայմաններում:

Մենք ունեցանք մաս ավելի քան 20 համերգներ չարք, որոնք հեռարձակվում էին առցանց տիրույթում առանց համդիսաստեխի: Բնականաբար, առցանց ելույթները երբեք չեն կարող փոխարինել կենդանի համերգներին, դատարկ համերգասրահում համերգների դեպքում իմջ-ոյբան կիսատ է... Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը տարվա սկզբին ուներ բազմաթիվ հաստատված նախագծեր: 2020 թվականն առանձնահատուկ էջ դարձավ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի պատմության մեջ՝ հանրահայտ ջութակահար և նվագախմբի ղեկավար արտիստ Մաքսիմ Վենգերովի հետ ունեցած Եվրոպական համերգային շրջագայությունների շնորհիվ, որոնք ընթացքում մենք փայլուն ելույթներ ունեցանք Բեռլինի ֆիլիհարմոնիայում, Վիեննայի «Սյուզեփլ-վերեյնում», Լոնդոնի «Բարբիկան» կենտրոնում, Պրահայի «Ռուդոլֆինում» համերգասրահում, Զալցբուրգի «Grobtes Festspielhaus»-ում, Սյունյենի «Gasteig» մշակութային կենտրոնում, Շտուտգարտի «Բեթհովեն» համերգասրահում, Մոսկվայի «Ջարյադյե» համերգասրահում, իմջն անբխադեպ էր ոչ միայն նվագախմբի համար, այլ մաս մեր երկրի համար, քանի որ համերգասրահներին չէր մատուց Հայաստանից երբևէ որևէ երաժշտական կուլեկտիվ չէր ներկայացել:

Երաժշտական պրոդյուսերների հետ բավական երկար համագործակցության և աշխատանքի արդյունքում, մենք կարողացանք համերգային ծրագրում ներառել Ջոն Տեր-Թադևոսյանի «Մարդու ճակատագիրը» 2-րդ Սիմֆոնիան, որը բոլորովին անճանոթ ստեղծագործություն էր նվիրույթի ունկնդրի համար: 2նայանք, կարող եմ ասել, որ այս ստեղծագործությունը հայ կոմպոզիտորական դպրոցի լավագույն նմուշներից է և XX դարի հայ սիմֆոնիկ երաժշտության գոհարներից մեկը, որը նվագախմբի կատարմամբ արդեն երկու անգամ հնչել է նաև Հայաստանում: Համերգների ժամանակ աշխարհահռչակ ջութակահար Մաքսիմ Վեցերոկով կատարեց Մաքս Բրուկսի 1-ին ջութակի Կոնցերտը և Ռավելի «Ջնջուհիներ»:

Դրանից հետո, նվազախումբն իրականացրեց ամեն տարի տեղի ունեցող արդեն ավանդական դարձած 3-րդ կոմպոզիտորական արվեստի փառատոնը, որը նվիրված էր Ալեքսանդր Զարուքյունյանի ծննդյան 100-ամյակին։ Փառատոնին մասնակցելու համար 3այաստան ժամանեց Լոնդոնի սիմֆոնիկ նվագախմբի կոմցերտմայստեր՝ Ռոմանոս Սիմոնիլը։ Նա կատարեց Ալեքսանդր Զարուքյունյանի ջութակի և լարայինների կոմցերտը, այս տեղծագործությունը մա պատրաստվում է ներկայացնել մահ այլ բեմերում։ Շատ կարևորում ենք մահ մեր շրջագայություններն Իսրայելում, որոնք տեղի ունեցան մարտ ամսին։ Նվագախումբը հանդես եկավ «Heichal HaTarbut» համերգասրահում և կատարեց Պյոտր Զայկովսկու «Կարապի լիճը» սյուիտը, Մաքս Բրուկսի ջութակի կոմցերտը՝ Մաքսիմ Վենգերովի հետ։

Իսրայելից վերադառնալուն պես սկսվեց արտակարգ դրությունը Հայաստանում:

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը
հրավեր ուներ Օմանի Սուլթանությունից, որտեղ պետք է
համոզես զարի հայտնի մեներգիչներից՝ Անջելա Բլուի և Թոմ-
մաս Դամփսոնի հետ, սակայն այդ համերգը հետաձգվեց
համավարակի պատճառով:

Այդ ընթացքում մենք ունեցանք բազմաթիվ միջոցառումներ. ապրիլ ամսին նվազախումբը մասնակցեց Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում Հայոց Ցեղասպանու-

թյան 105-րդ տարելիցին նվիրված համերգ-միջոցառումներին, ինչպես նաև համամուն այցում նվազախտությամբ նկարահանված տեսահոլովակում՝ նվիրված Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին՝ ներկայացնելով Էդուարդ Բաղդասարյանի Նոկոտյորմը:

Երկար դադարից հետո, մենք փորձում էինք լուծումներ գտնել նվագախմբի աշխատանքը վերսկսելու համար: Ուսումնասիրելով միջազգային փորձը, համագործակցելով բժիշկների, համաճարակաբանների և իրավաբանների հետ, կարողացանք հուլիս ամսին իրականացնել համերգների մի նոր ֆորմատ, ինչը հնարավորություն տվեց կազմակերպել և առցանց անցկացնել «Music 20» միջազգային փառատոնը Հայաստանում, որին մասնակցեցին միջազգային ճանաչում ունեցող մենակատարներ և դիրիժորներ՝ Բորիս Անդրիանովը, Վլոդիս Կամպաները, Մարիուս Ստրավինսկին, Ֆիլիպ Կոպաչևսկին, Ալան Չիրկոպը և այլոք: Նույն ամսին կարողացանք ծայնագրել Տիգրան Սանուրյանի կինոերաժշտությունը PAMA միջազգային ծայնագրող ընկերության հետ, որը համդիսանում է Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի պաշտոնական գործընկերը: Նշենք, որ Տիգրան Սանուրյանի կինոերաժշտությունը երբևէ չէր ծայնագրվել: Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը, դեռ 2019 թ. վերականգնել է բոլոր գործընկերությունները, այսպիսով մենք ունեցանք բարձրորակ ծայնագրություններ և մշտապես կարող ենք լավ գործիքավորմամբ հնչեցնել այս ստեղծագործությունները: Սեպտեմբերին՝ համերգաշրջանի բացմանը, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը կատարեց Ամսոնի Դվորժակի 9-րդ Սիմֆոնիան և հատվածներ Տիգրան Սանուրյանի «Չլույն թագուհին» բալետից: Դրանից հետո սկսվեց «Արմենիա» միջազգային փառատոնը, որի միայն 2 համերգ կարողացանք իրականացնել, արդեն ունեինք ԿԿՄՍ մախարադուրյան սահմանած չափանիշներին համապատասխան հանդիսատես: Կարծես թե վերականգնվում էին մեր համերգները, սակայն պատերազմի պատճառով ընդհատվեց նաև մեր համերգային գործունեությունը: Սակայն նվագախումբը շատ կարճ ժամանակահատվածում իրականացրեց բարեգործական բացօթյա համերգ-դրամատիկալերն «1000+» հիմնադրամի հետ համատեղ և կարողացավ հավաքել 30 միլիոն դրամ ու նվիրաբերել հիմնադրամին:

Նվազախմբի աղմինհատրատիվ կազմը և նվազախմբի երաժիշտներն առաջին իսկ օրվանից ներգրավված են եղել մի շարք կամավորական մախաձեռնություններում:

Բարեգործական համերգները ունեցանք Արցախից եկած երեխաների համար, որտեղ մեր երաժիշտները կատարեցին հատվածներ տարբեր մուլտֆիլմերից: Իսկ արդեն դեկտեմբեր ամսին մենք վերականգնեցինք նվագախմբի գործունեությունը և ներկայացրեցինք մի ծրագիր՝ Հայաստանում գտնվող արցախցի և պատանազնուն գոհված կամ վիրավորում ստացած զինծառայողների երեխաների համար: Նրանք հնարավորություն ունեցան ներկա գտնվել Կարեն Դեմիրճյանի անվ. մարզահամերգային համալիրում տեղի ունեցած այս հեքիաթային միջոցառմանը, որտեղ «Դիսնեյ» ընկերության հետ բացառիկ համագործակցության արդյունքում ցուցադրվեց «Սառցե սիրտը» մուլտֆիլմը, Հայաստանի պետական սինֆոնիկ նվագախմբի կենդանի կատարմամբ:

Հայաստանի հանրային հեռուստաընկերության հետ համագործակցության արդյունքում ունեցանք համերգային տեսագրություն, որը ցուցադրվեց տարեմուտի զինե-րը:

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբն Ա. Սպենդիարյանի անվ. օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում ներկայացրեց հայ կոմպոզիտոր-ստանի արվեստի լավագույն ստեղծագործությունների ընտրանի:

Հունվարի 25-ին, մենք նշեցինք նվազախմբի 15-ամյակը՝ համերգին մասնակցեցին մենակատարներ Հայաս-

տանից և արտերկրից:

Նվազախումբն այս ընթացքում իրականացրել է հայկոմպոզիտորների մի շարք ստեղծագործությունների ծայկոմպոզիտորներ: Թողարկեցինք Կոմիտասի երկու, դեռևս նկատարված ստեղծագործությունները՝ «Ամստառի գիշերը» և «Հիշողություններ» պիեսներ նվագախմբի համար:

Ի՞նչ մտահաղացումներ ունեիք, որոնք չիրականացան:

Մի փոքր ավստասանքով պետք է նշել, որ նվազախումբն ուներ բազմաթիվ՝ մոտ մեկ ու կես տարի առաջ պլանավորած համերգներ, ինչպես նաև հյուրախաղեր՝ այդ թվում նաև հյուրախաղերն Օմանում, հունվարին **IMG** ընկերությանը հրավերով նվազախումբը հյուրախաղերի պետք է մեկներ *Իրաքյալ Թագավորություն*, որտեղ, հայտնի ջութակահար Նեմանյա Ռադուլովիչի հետ պետք է ներկայացներ Խաչատրյանի ջութակի Կոմբերտը, բայց համերգները տեղափոխվեցին 2021 թվականի աշունը։ Լիա-հույս ենք, որ 2020 թվականի բոլոր չէղարկված համերգ-ներն էլ հյուրախաղերը տեղի կունենան 2021 և 2022 թվա-կաններին։

Ինչպե՞ս է ազդել նվագախմբի վրա նոր իրավիճակը: Ի՞նչ եք անում ստեղծված իրավիճակում ճիշտ կողմնորոշվելու համար:

Իրականում մշակույթն այն կարևոր ոլորտներից է, որը միշտ պետք է աշխատի և ապացուցի, որ կյանքը շարունակվում է: Իհարկե, պատերազմի սկիզբին՝ սեպտեմբերի 27-ին դադարեցրեցինք մեր համերգները, սակայն երկար դադարներն ազդում են պրոֆեսիոնալ որակի վրա, քանի որ երեմշտույնում, ինչպես և սպորտը պահանջում են մեծմտյա մշտական փորձեր և պարամունքներ՝ լավ «մարզավիճակ»:

Այդ իսկ պատճառով շատ կարևոր է, որ մենք կարողանանք համավարակի և այս ոչ այնքան լավ տրամադրության պայմաններում, ստեղծել պոզիտիվ միջավայր և համերգներում հանդես գալ, որպեսզի մեր հանրությունը կարողանա շարունակել լսել դասական երաժշտություն: Այս տարվա սկզբին մենք համերգով հանդես եկանք Ստեփանակերտում և Ստեփանակերտի Սուրբ Աստվածածին եկեղեցու մոտ, այսպիսով ազդարարելով, որ կյանքը շարունակվում է և մենք պետք է շարունակենք հնարավորության սահմաններում օգնել մեր արցախյացի հայրենակիցներին:

Ինչ ծրագրեր ունեք առաջիկայում:

Նախատեսվում է հյուրախաղեր, մի քանի եվրոպական երկրներում, որոնք այս պահին դեռ հետաձգված չեն և հուսով ենք, որ շատ շուտով դրանք կիրականանան: Այս տարի ամռանը տեղի է ունենալու Ա. Խաչատրյանի անվ. միջազգային մրցույթը՝ դիրիժորություն» մասնագիտությամբ:

Եվ վերջում, ինչ կապելացնեիք՝

Ցանկանում եմ, որ երբեք չկորցնենք մեր լավատեսությունը, չմայած այս պահին երկրում տիրող իրավիճակին։ Յուրաքանչյուրս կատարենք մեր աշխատանքը և մտածենք միայն արդյունքների մասին։ Նաև կարծում եմ, որ մշակույթն այն կարևոր և մնայուն արժեքներից է, որը պետք է պահպանենք, դա էլ է այսպես ասած՝ «առաջնագիծ», որտեղ պետք է բարձրացնենք իհարկում՝ պահպանել և արտոնարկում ներկայացնել հայ կոմպոզիտորական կատարողական արվեստը։ Լիափույս եմ, որ 2021 թվականին նվագախումբը կկարողանա իրագործել իր առջև դրված բոլոր ռազմավարական նպատակները և խնդիրները։

ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆ

Երաժշտագետ,

«Երաժիշտ» ամսաթերթի գլխավոր խմբագիր

«ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

«Լավագույն ուսանող» մրցույթի հաղթողներ



1 Փետրվարի 17-ին ԿԳՄՍ նախարարությունում տեղի ունեցավ 2020 թվականի «Լավագույնն ուսանող» մրցույթի հաղթողների պարգևատրման համահյուսակր արարողությունը՝ ԿԳՄՍ նախարար Վահրամ Դուսմանյանի, նախարարի տեղակալների, բուհերի ղեկավարների և ուսանողների մասնակցությամբ:


Նշենք, որ մրցույթն անցկացվել է ըստ կրթական աստիճանների՝ բակալավր ու մագիստրոս, և ըստ 7 ոլորտների՝ բնագիտություն, հասարակագիտություն, հայագիտություն, հումանիտար գիտություններ, բժշկություն, ճարտարագիտություն, մշակույթ և սպորտ: Մրցույթում հաղթող են ծանաչվել հանրապետության 16 բուհ ներկայացնող՝ 38 ուսանող:

Մշակույթ-սպորտ անվանակարգում, Երևանի Կոմիտասի պետական կոնսերվատորիայի ուսանող՝ **Լիլյա Առաքելյանը** (պրոֆեսոր Վաղարշակ Զարուբյունյանի

մասնագիտական դասարան, մագիստրոսականի 2-րդ կուրսի ուսանողուհի) զբաղեցրեց առաջին տեղը, ծանաչվելով լավագույն մագիստրոս, իսկ **Վարդան Գյողալյանը** (պրոֆեսոր Արմեն Բաբախանյանի մասնագիտական դասարան, բակալավրիականի 4-րդ կուրսի ուսանող) զբաղեցրեց 3-րդ տեղը «Լավագույն Բակալավր» անվանակարգում:

Խմբագրական

Անկապվեց «Երաժշտական շաբաթ կոնսերվատորիայում» առաջին փառատոնը



Փառատոնային օրագիր. օր 1

Փետրվարի 2-ից 8-ը երևանի պետական կոնսերվատորիայի Ակուստիկ լաբորատորիայում

անցկացվեց «Երաժշտական շաբաթ կոնսերվատորիայում» խորագրով առաջին փառատոնը: Նպատակը Հայաստանում մշակութային կյանքն ակտիվացնելն է: Փառատոնի գործընկերներն են Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտը և Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի Օպերային ստուդիան: Այն մեկնարկեց փետրվարի 2-ին, «Կայթ» խմբի մենահամերգով: Խմբի երաժիշտներն ասում են. «Դարակներից հանել ու փռուց ազատել են ազգային մոռացված երգերը»:

Ճանաչված երաժիշտներն ու երաժշտախմբերը համախմբվել են մեկ գաղափարի շուրջ՝ ակտիվացնել մշակու-

մուն անհետ կորած ԵՊԿ ուսանող և 2018-2019 թթ. Ուսանողական խորհրդի Գագիկ Խաչատուրյանին, ում ծննդյան օրն էր:


Օր 3. Փետրվարի 4-ին, ներկաներն ունկնդրեցին *Silence Duo* խմբին՝ սաքսաֆոնահար Դավիթ Մելքոնյանին և դաշնակահար Կարեն Մամիկոնյանին, ովքեր ժամանակակից



«Silence Duo» խումբ

երևանյան ջազի ամենավառ դեմքերից են: Համերգին ներկայացվեցին Կարեն Մամիկոնյանի հեղինակած գործերը, իսկ վոկալ կատարումների համար նրանց միացավ մենակատար՝ Աննա Կոստանյանը:


Օր 4. Փետրվարի 5-ին, ԵՊԿ Ակուստիկ լաբորատորիան հյուրընկալել էր երաժշտական լրագրող և ռադիոհաղորդավար Արմեն Մանուկյանին: Բանախոսը ջազի սիրահարն է:



Արմեն Մանուկյան

րին ներկայացրեց «Ինչպես են առաջանում չափանիշները» ինտերակտիվ շնորհանդեսը: Ա. Մանուկյանը հայկական ջազի մասին բազմաթիվ հոդվածների հեղինակ է հայաստանյան և արտասահմանյան լրատվամիջոցներում: Նա www.armjazz.info կայքի խմբագիրն է, ինչպես նաև 2018 թ. Մեծ Բրիտանիայում լույս տեսած «Եվրոպական ջազի պատմությունը» գրքի համահեղինակն ու հայկական ջազի մասին գլխի հեղինակը:

Օր 5. Փառատոնի 5-րդ օրը՝ փետրվարի 6-ին ելույթ ունեցավ *Personal Opinion Project*-ը, որի հիմնադիրն է սաքսաֆոնահար Դավիթ Մելքոնյանը: Նրան և նախագծի այլ մասնակիցներին հանդիսատեսն արդեն հասցրել էր լսել փառատոնի անցած ելույթներից մի քանիսի ժամանակ:



Personal Opinion Project

Personal Opinion-ը ստեղծվել է 2019-ին, թմի նպատակն է ներկայացնել հայկական երաժշտական արվեստը ջազային ելեքներով:



«Նորայր Քարտաշյան և Մենուա» խումբ

Օր 6. Հաջորդ համերգին, փետրվարի 7-ին ելույթ ունեցավ «Նորայր Քարտաշյան և Մենուա» խումբը: Հնչում էին փողային ժողովրդական գործիքները՝ համադրված հարվածային գործիքների և թավջութակի հետ: Այս խումբը նվագում է ավանդական հայկական, ինչպես նաև հիբրիդային գործիքներ, որոնք տարիներ շարունակ մշակվել են Նորայր Քարտաշյանի կողմից, և հենց նրա նախաձեռնությամբ էլ ստեղծվել է խումբը: Վերջինս ներկայացնում է հայկական երաժշտությունն ինչպես ավանդական, այնպես էլ նոր գործիքավորմամբ:

Օր 7. «Երաժշտական շաբաթ կոնսերվատորիայում» առաջին փառատոնը եզրափակվեց փետրվարի 8-ին, *Arm Strong Dixie* խմբի համերգով, որի կատարմամբ հնչեց դիքսիլենդ ջազային ոճի երաժշտություն: Նաև կատարվեցին երևանյան մի քանի երգեր՝ նույն ոճի երաժշտական ձևավորումով: Բենդն ստեղծվել է *Arm Strong Production*-ի հիմնադիր, շեփոհար Լևոն Այվազյանի կողմից, ով իր շուրջ հա-



«Arm Strong Dixie» խումբ

վաքել է տաղանդավոր երաժիշտների մի խումբ: *Arm Strong Dixie*-ն կատարում է ամերիկյան, մասնավորապես՝ նորօլդսթայլի ստեղծագործություններ, ինչպես նաև հայ երաժշտության լավագույն նմուշները՝ մշակված Դավիթ Գյոդակյանի կողմից դիքսի ոճով:

Առանձնահատուկ շնորհակալություն փառատոնի կազմակերպիչ՝ Ուսանողական շաբաթին, որը ձևավորվել էր պատերազմի օրերին և առայսօր շարունակում է ակտիվ աշխատանքը:

Փառատոնի կայացման գործում իրենց գործուն մասնակցությունն են ունեցել ԵՊԿ Ռեկտորատը, Ակուստիկ լաբորատորիայի տնօրեն՝ Սերգեյ Ունդույանը, ԵՊԿ Օպերային ստուդիայի տնօրեն՝ Հայկ Վարդանյանը և Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի Ռեկտորատը և Ուսանողական խորհուրդը:

Ելույթը պատրաստեց ԱՐՄՍԻՆ ԱՌՈՅԱՆԸ

թային կյանքը, հատկապես երաժշտությամբ խաղաղեցնել ունկնդրի հոգեկան աշխարհը: Կոնսերվատորիայի հասարակայնության հետ կապերի բաժնի պատասխանատու՝ Սոնա Խաչատուրյանը նշում է, որ գաղափարը ծնվել է պատերազմից հետո. «Մարդկանց հոգիները մշակույթով լցնելու, տրամադրությունները բարձրացնելու, երաժշտասերների սփոփելու խիստ անհրաժեշտություն կա»:

Օր 2. Փառատոնի 2-րդ օրը՝ փետրվարի 3-ին ԵՊԿ Ակուստիկ լաբորատորիայում ջազային տրամադրություն էր. ելույթ ունեցավ *Dave Geodakyan Sextet*-ը: Խումբն ստեղծվել է 2018-ին, իսկ հիմնադիրը ԵՊԿ շրջանավարտ և արդեն ԵՊԿ դասախոս Դավիթ Գյոդակյանն է: Ելույթի ժամանակ հնչեցին ինչպես Դավիթ Գյոդակյանի, այնպես էլ՝ մյուս անդամների հեղինակած ստեղծագործությունները: Համերգը նվիրված էր արցախյան երկրորդ պատերազ-



«Dave Geodakyan» սեքստետ

«Երաժիշտ» ամսաթերթի 15-ամյակը, շնորհանդես

3 Զրատարակվում է մալ ԵՊԿ դասախոսների տարեկան ուսումնամեթոդական հոդվածների ժողովածուն, 11-րդ հերթական համարով (հիմնադրված 2004 թ. և վերահիմնած 2019-ին): Չմայած «ԵՊԿ հրատարակչություն»-ն իր աշխատակիցների թվաքանակով շատ է կրճատվել, սակայն աշխատանքներն ընթանում են բավականին եռանդուն և ամենակարևորը՝ արդյունավետ:

ԳՐԱՐ ՇԱԳՈՅԱՆ
«ԵՊԿ հրատարակչության»
հիմնադիր-հրատարակիչ,
«Երաժիշտ» ամսաթերթի հիմնադիր,
թողարկման պատասխանատու,
և խմբագիր



«ԵՊԿ հրատարակչության» շնորհանդեսի մասնակիցներ, հյուրեր



Աննա Մարության, Իզաբելլա Մարության, Գոհար Շաղոյան, Լիանա Խաչատրյան, Գայանե Սահակյան, Սաթենիկ Մկրտչյան, Դասմիկ Մկրտչյան, Արմինե Աթոյան

«ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Հայերն ամենաերաժշտական ազգերից մեկն են. Ջուն Յամադա

Կ ո յ ի տ ա ս ի անվ. կամերային երաժշտության տանը, փետրվարի 11-ին կայացած համերգ-շնորհանդեսի ընթացքում, առաջին անգամ ներկայացվել են ճապոնիայի կառավարության «Grassroots» դրամաշնորհային ծրագրով Հայաստանի պետական կամերային նվագախմբին հատկացված



ՀՀ-ում ճապոնիայի արտակարգ և լիազոր հեսպան Ջուն Յամադա, Կամերային երաժշտության ազգային կենտրոնի տնօրեն Նորայր Նազարյան

Yamaha երաժշտական նոր գործիքները՝ ռոյալ, գոսեր, մեծ և փոքր թմբուկներ, քսիլոֆոն, գլյուկենշպիլ, տուբուլար զանգեր, կլավինո, ծայնային-ֆոնային համակարգ: Շնորհանդես-համերգին ելույթ են ունեցել Հայաստանի պետական կամերային նվագախումբը՝ դիրիժոր Ռոբերտ Մլեքյանի ղեկավարությամբ և դաշնակահար Սվետլանա Նավասարդյանը: Համերգային ծրագրում. Յ. Ս. Բախ՝ դաշնամուրային Կոնցերտ ռե մինոր, Բիզե/Շչեդրին «Կարմեն-սյուիտ» լարային նվագախմբի և հարվածայինների համար: Միջոցառմանը ներկա են եղել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ՝ Արա Խզմալյանը, ՀՀ-ում ճապոնիայի արտակարգ և լիազոր հեսպան Ջուն Յամադան, Կամերային երաժշտության ազգային կենտրոնի տնօրեն՝ Նորայր Նազարյանը: Համերգի մեկնարկից առաջ ՀՀ-ում ճապոնիայի արտակարգ և լիազոր հեսպանը նշել է, որ Հայերն իրենց բնույթով ամենաերաժշտական ազգերից են և չկա մի լեզու, որ միավորում է մարդկանց առավել, քան երաժշտությունը: «ճապոնիայի համար մեծ պատիվ է աջակցել Հայաստանում երաժշտական կյանքի զարգացմանը: YAMAHA բրենդը մարմնավորում է ճապոնական մոտեցումն առ կատարելությունն ու մշտական նորարարությունը, և մենք ըստ արժանվույն ենք գնահատում այդ ապրանքանիշի հիմնալի ապրանքները: Հուսանք, որ լիարժեք և բուռն երաժշտական կյանքի վերականգնող գույքահեռ Հայաստանը վստահորեն առաջ կշարժվի՝ հաղթահարելով նախորդ տարվա բոլոր դժվարությունները: ճապոնիան ցանկանում է լինել Հայաստանի կողքին՝ մեծ վերականգնման և նոր ձգտումների այս ժամանակաշրջանում», - ընդգծել է հեսպանը: Ծրագրի շրջանակում տեղի է ունեցել հուշատախտակի բացման արարողությունը: «Հայաստանի պետական կամերային նվագախմբին երաժշտական գործիքների տրամադրման նախագիծն իրականացրել է Կամերային երաժշտության ազգային կենտրոնը, Հայաստանի Հանրապետությունում ճապոնիայի դեսպանության աջակցությամբ, «Grassroots» մշակութային դրամաշնորհային ծրագրի (GCGP) շրջանակում», - նշված է հուշատախտակի վրա:

Նյութը քաղված է
<https://artsakhtert.com/arm/index.php/culture-and-education/item/30874-2021-02-15-11-59-32>
կայքից

❖ Փետրվարի 15-ին Հայաստանում թուրքմենստանի հեսպան՝ Մուխամետգելդի Այազովի նախաձեռնությամբ Երևանի Կոմիտասի պետական կոնսերվատորիայի և Թուրքմենստանի ազգային կոնսերվատորիայի միջև տեղի ունեցավ առցանց վարպետության դաս՝ թվով երրորդը:



Ինքնամեկուսացման ամիսներին անցկացվել էին մալ դասական վոկալի և դաշնամուրի առցանց վարպետության դասեր: Այս անգամ միջոցառումը նվիրված էր ջութակին, և այն ներկայացրեցին նվագախմբային ֆակուլտետի դեկան, դոցենտ Ռուբեն Սմբատյանը և լարային ամբիոնի պրոֆեսոր Գագիկ Սմբատյանը: Միջոցառումը համակարգում է ԵՊԿ Որակի ապահովման բաժնի վարիչ, երաժշտագետ, արվեստագիտության թեկնածու Նարինե Ավետիսյանը:

❖ Փետրվարի 17-ին ԵՊԿ օպերային ստուդիան համերգով հանդես եկավ Երևանի Մխիթար Հերացու անվ. պետական բժշկական համալսարանում: Համերգը նվիրված էր Բեթովենի ծննդյան 250-ամյակին, ծրագրում նրա վոկալ ստեղծագործությունների շարքն էր՝ «Աստղագարդ երկինքն իմ գլխավերևում» խորագրի ներքո: Հեղինե Խաչատրյանի (սոպրանո), Վարդուհի Թորոյանի (սոպրանո), Արթուր Մկրտչյանի (բաս), Մերի Մարտիրոսյանի (սոպրանո), Արամ Մամիկոնյանի (տենոր), Լիլիթ Դավթյանի (սոպրանո), Նավասարդ Հակոբյանի (բարիտոն), Մարիաննա



Օլգա Խաչիկյան (կոնցերտմայստեր), Հեղինե Խաչատրյան, Վարդուհի Թորոյան, Արամ Մամիկոնյան, Հովհաննես Կարապետյան



Հովհաննիսյանի (սոպրանո), Հովհաննես Կարապետյանի (բաս), Բելլա Ամարյանի (մեծ-սոպրանո), Գրիշա Մարտիրոսյանի (բարիտոն) կատարմամբ հնչեցին գերմանալեզու ստեղծագործություններ: Կոնցերտմայստերներն էին Օլգա Խաչիկյանը, Լիլիթ Հակոբյանը, Վալերի Այվազյանը, Նվարդ Մարուխյանը, Հասմիկ Անտոնյանը և Մարիաննա Հայրապետյանը: Համերգը վարեց ԵՊԿ օպերային ստուդիայի գեղարվեստական ղեկավար՝ Հասմիկ Պապյանը, ով միջազգային ավարտին մեծ հուզմունքով ընթերցեց Բեթովենի հանրահայտ կտակը՝ ուղղված եղբայրներին:

❖ Փետրվարի 22-ին ԵՊԿ ակուստիկ լաբորատորիայում տեղի ունեցավ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի և Թուրքմենստանի ազգային կոնսերվատորիայի և մեկ համատեղ առցանց վարպետության դաս: Թվով 4-րդ վարպետության դասը նվիրված էր ժողովրդական նվագարաններին: ԵՊԿ-ի կողմից մասնակցություն ունեցան ժողովրդական նվագարանների և երգեցողության ամբիոնի պրոֆեսոր, քանոնահար Ծովինար



ԵՊԿ ուսանողներ

Հովհաննիսյանը, նրա աշակերտուհիներն ու ասիստենտ Գայանե Աբաջյանը: Ներկայացված ծրագիրը ներառում էր եկեղեցական շարականներ և տաղեր, Սայաթ-Նովա և Կոմիտաս, ժողովրդական ստեղծագործություններ և իմպրովիզային կատարումներ: Ծ. Հովհաննիսյանը, հիացրեց Արմեն Սանդակունյանի «Միրելիս» երգի հիման վրա իմպրովիզային կատարմամբ: Կոնսերվատորիայի ուսանողուհիները մալ կատարեցին ԵՊԿ շրջանավարտ Մերի Սամվելյանի հեղինակած «Ամոռուկ» ստեղծագործությունը բլուլի մասնակցությամբ, իսկ դաշնամուրով նրանց նվագակցեց հեղինակը: Վարպետաց դասը եզրափակվեց անսամբլի ջազային կատարմամբ: Հնչեց Մ. Շմիտցի «Նարնջագույն բուգիներ»ը Ծ. Հովհաննիսյանի փոխադրմամբ: Համերգային ծրագրի ավարտից հետո, Թուրքմենստանի ազգային կոնսերվատորիայի ուսանողները նույնպես ցուցադրեցին իրենց երաժշտական կարողությունները:

❖ Փետրվարի 7-ին, Ա. Խաչատրյան համերգասրահում տեղի ունեցավ աշխարհահռչակ թավջութակահար՝ Ալբան Գերհարդի վարպետության դասը հայ երիտասարդ երաժիշտների հետ: Վարպետության դասին մասնակցեցին Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի ուսանողներ, Չայկովսկու անվ. միջնակարգ երաժշտական մասնագիտական, Ավետ Գաբրիելյանի անվ. և այլ երաժշտական դպրոցների սաներ:

Կոմպոզիտոր Հասմիկ Հարությունյանն արժանացել է մրցանակի Բրյուսելում



Հասմիկ Հարությունյան

Կոմպոզիտոր Հասմիկ Հարությունյանը «Le Saison Stars AU Brussels» միջազգային մրցույթում ներկայացնելով «Լուսին» ստեղծագործությունը դաշնամուրի համար, («Գործիքային» անվանակարգում) արժանացել է 1-ին մրցանակի (որպես լավագույն մոդերն դասական կոմպոզիցիայի): «Le Saison Stars AU Brussels»-ը ամենամյա հեղինակավոր միջոցառում է, որն անցկացվում է Բելգիայի մայրաքաղաք Բրյուսելում: Այն հայտնի է մշակութային փոխանակման իր համապարփակ և խորը մոտեցմամբ՝ ընդգծելով գեղարվեստական գերազանցությունը, նորարարությունը և միջազգային համագործակցությունը:

Համարվում է Բրյուսելի լավագույն յոթ փառատոներից մեկը, որը կազմակերպվում է Եվրոմեդիա աստղային խմբի օրենսդիր ժողովի, Եվրոպական մշակույթի, գիտության և կրթության հանձնաժողովի կողմից, ամեն տարի: Կոմպոզիտորի ստեղծագործությունն արժանացել է հանձնախմբի բարձր գնահատականին. «Կոմպոզիտոր Հասմիկ Հարությունյանի աշխատանքը ցուցադրել է մեծ ստեղծագործականություն, տեխնիկական հմտություն և մոդերն դասական երաժշտության խորագույն ըմբռնում: Կոմպոզիտորի, որի կազմում են հանձնախմբի պատկառելի անդամներ՝ երաժշտության և կրթության բնագավառում մեծ փորձով, խորապես տպավորված էր մրցանակակրի ստեղծագործության նորարարությամբ և էմոցիոնալությամբ: Կոմպոզիցիան առանձնահատուկ տեղ է զբաղեցրել հայկական մոնոդիկ երաժշտությունը դասական և ժամանակակից էլեմենտների հետ համադրմամբ, ինչը ցույց է տալիս կոմպոզիտորի պրոֆեսիոնալիզմը և ազգային պահպանման կարողությունը: Ընտրությունը միաձայն էր, ինչը արտահայտում է հանձնախմբի անդամների բարձր գնահատանքը մրցանակակրի ստեղծագործության նկատմամբ: Հաղթողի աշխատանքը առանձնացել է իր յուրօրինակությամբ, տեխնիկական գերազանցությամբ: Շնորհակալություն և հաջողություններ:



թյուն հաղթողին՝ իր ակնառու հաջողության և մոդերն դասական երաժշտության զարգացման գործում իրական ներդրման համար»:

ԱՐՄԻՆԵ ԱՌՈՅԱՆ
Երաժշտագետ

«ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀՎՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»



❖ Փետրվարի 24-ին՝ ԵՊԿ օպերային ստուդիայի դահլիճում կայացավ օպերային պատրաստման ամբիոնի «Օպերային խմբակներ» համերգ-ներկայացումը, որը նվիրված էր կոնսերվատորիայի 100-ամյակին: Համերգը վարեց օպերային պատրաստման ամբիոնի դասախոս Արսեն Ղազարյանը, ելույթ ունեցան ամբիոնի լավագույն կատարողները՝ փոխանցելով աննկարագրելի զգացողություններ և ապրումներ: Ներկայացվեցին հատվածներ «Ֆիգարոյի ամուսնությունը», «Լուչիա դի Լամմերմուր», «Պուրիտաններ», «Թագավորի հարսնացուն», «Ռոմ Պակուալե», «Ֆաուստ» օպերաներից, ինչպես նաև օպերային համարներ: Յուրաքանչյուր կատարում մտածված էր իր բոլոր դետալներով՝ սկսած փայլուն ելույթներից ավարտած դեկորացիաներով և արտիստների հագուստներով:

❖ Փետրվարի 22-ին, Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիան հյուրընկալեց Հայաստանում ճապոնիայի Դեսպան և կոնսերվատորիայի մեծ բարեկամ պարոն Ջուն Յամադային և երկրորդ քարտուղար՝ տիկին Ռիկա Օնոդերային: Հյուրերի այցը պատահական չէր: 2020-ի դեկտեմբերին դաշնակահար, ԵՊԿ պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր արտիստ Անահիտ Ներսեյանը ճապոնիայի արտաքին գործերի նախարարի կողմից պարգևատրվել էր շնորհակալագրով՝ ճապոնիայի և Հայաստանի միջև հարաբերությունների մերձեցման գործում ունեցած մեծ

ավանդի համար: 1994 թվականից ի վեր, իր համերգային և կրթական գործունեությամբ՝ Անահիտ Ներսեյանն ակտիվորեն ներգրավված է հայ-ճապոնական հարաբերությունների ամրապնդման գործում: Նախորդ տասնամյակում տիկին Ներսեյանը մենահամերգներով հանդես է եկել Տոկիոյում, Կոչիում, Տակամացուում, Տոկիոյի ազգային կոնսերվատորիայում կարդացել է դասախոսություններ՝ նվիրված Բախի երաժշտության մեկնաբանությանը, անցկացրել վարպետության դասեր այդ երկրի տարբեր երաժշտական ուսումնարաններում: ԵՊԿ այցի շրջանակներում պարոն Յամադան ռեկտոր Սոնա Հովհաննիսյանի, պրոռեկտորների և դասախոսների ուղեկցությամբ շրջայց կատարեց բուհում, այնուհետև ներկա գտնվեց իր այցի և Ա. Ներսեյանի պարգևատրման առիթով կազմակերպված համերգին, որին մասնակցեցին ԵՊԿ դաշնամուրային ֆակուլտետի ուսանողներ՝ Մարգարիտա Միքայելյանը (բակալավրականի 1-ին կուրս, պրոֆեսոր՝ Վ. Հարությունյան), Վահե Միկոյանը (մագիստրոսականի 1-ին կուրս, պրոֆեսոր՝ Ի. Հակոբյան), Մարգարիտա Ասատրյանը (բակալավրականի 3-րդ կուրս, պրոֆեսոր՝ Վ. Օհանյան), Հասմիկ Ալեքսանյանը (բակալավրականի 3-րդ կուրս, պրոֆեսոր՝ Ի. Հակոբյան), Տիգրան Պետրոսյանը (մագիստրոսականի 2-րդ կուրս, պրոֆեսոր՝ Գ. Ավանեսով): Համերգի եզրափակիչ հատվածում Անահիտ Ներսեյանը կատարեց Առնո Բաբաջանյանի «Էլեգիան», Իչիրո Նոդայիի «Աշնանային տոն գյուղում», Կոմիտաս-Սարաջյան «Հաբեբան» և Ակիրա Իֆուկուբեի «Տանաբատա» ստեղծագործությունները: Համերգին նախորդած իր խոսքում, Դեսպան Ջուն Յամադան նշեց, որ կոնսերվատորիան իր համար հեքիաթային մի վայր է, ուր միշտ հաճելի է վերադառնալ:

Համերգից հետո ԵՊԿ պրոֆեսոր Արմեն Բուդաղյանը Դեսպանին հանձնեց հայ կոմպոզիտորների հեղինակների ստեղծագործություններ՝ Վիլլի Սարգսյանի կողմից դաշնամուրի համար կատարված փոխադրմամբ, իսկ «Կոմիտաս» հրատարակչության տնօրեն Ռուզաննա Յեսայանը Դեսպանին նվիրեց Ալեքսանդր Հարությունյանի ծննդյան 100-ամյակի առիթով հրատարակված նրա վոկալ ստեղծագործությունների հավաքածուն:

Ելույթ ունեցան Զինվորի տանը բուժվող մեր հերոսների համար:

Միջոցառումը տեղի է ունեցել ԵՊԿ-ի և Զինվորի տան միջև համագործակցության մեկնարկի շրջանակում, և այ-



ԵՊԿ ուսանողները ելույթ ունեցան Զինվորի տանը

սուհետև նման համերգները կկրեն շարունակական բնույթ: Այս կապակցությամբ Զինվորի տուն էին այցելել ԵՊԿ ուսումնական գծով պրոռեկտոր՝ Արամ Հովհաննիսյանը և Միջազգային համագործակցության և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր՝ Արմեն Բաղդասարյանը:

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

❖ Տ. Չուխաջյանի անվ. երաժշտական դպրոցի լաբային բաժնի ղեկավար, ջութակի ուսուցչուհի՝ Մելանյա Մաշտոցի Մկրտչյանին՝ դպրոցի 2019-2020 ուսումնական տարվա լավագույն ուսուցչի կոչման արժանանալու կապակցությամբ: Նա տարիներ շարունակ ցուցաբերել է գերազանց արդյունքներ՝ ունենալով հիմնալի շրջանավարտներ, որոնցից շատերն իրենց ուսումը շարունակել են Երևանի պետական կոնսերվատորիայում:

❖ Արմավիրի արվեստի պետական թուղթի դիուխարների անամբլի բոլոր ուսանողներին՝ 2020 թ. մեկնարկված «Արտ Մյուզիք» արվեստի XI միջազգային մրցույթ-փառատոնում տարած փայլուն հաղթանակի և 1-ին կարգի դափնեկրի կոչման արժանանալու առիթով: Ինչպես նաև, 2021 թ. Ծաղկածորում «Աբայ Արտ»-ի կողմից կազմակերպված համերգի ընթացքում թուղթի պարարվեստի բաժնի ուսանողուհիներն աչքի են ընկել իրենց հաջողություններով՝ արժանանալով պատվոգրի: Այս հաղթանակների առթիվ շնորհավորում ենք նաև Արմավիրի արվեստի պետական թուղթի ժողովրդական գործիքներ և Պարարվեստ բաժնիների դասախոսներ՝ Հովհաննես Մարտիրոսյանին և Գոհար Բարեղամյանին, իրենց պատվավոր գործը փայլուն իրականացնելու և նման ուսանողներ կրթելու համար:

Նյութը պատրաստեց՝ ԱՐՄԻՆԵ ԱՌՈՅԱՆԸ



Անահիտ Ներսեյան



Ջուն Յամադան ԵՊԿ ուսանողների հետ

❖ Փետրվարի 24-ին ԵՊԿ ուսանողները Մարգարիտա Միքայելյանի և Վահե Միկոյանի համերգին մասնակցեցին:

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐԹՅՈՒՆ ԻՐԱՎԱՆԱՅՆՈՂ ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՆԵՎՏՐԱԾԻ ԿԱՅԱՎԵՐԴՈՒԹՅՈՒՆ
Վկայական N 03U059505 տրված 7.04.2003 թ.
ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐ՝ Կոմիտասի անվ. ԵՊԿ ՊՈԱԿ
ՍԵՐԳԵՅ ՍՈՐԱՅԱՆ, ԳՈՐԱՐ ԸՎԳՈՅԱՆ
Գլխավոր խմբագիր՝ ԱՐՄԻՆԵ ԱՌՈՅԱՆ
Թողարկման պատասխանատու՝ ԳՈՐԱՐ ԸՎԳՈՅԱՆ
Հմբագիրներ՝ ԱՆՈՒՇ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ (հայ. լեզու),
ՍՈՖԱ ԱՋՆԱՒՈՐԾՅԱՆ (ռուս. լեզու)
Գեղարվեստական խմբագիր՝ ԳՈՐԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արտատպումը միայն «Երաժիշտ» ամսաթերթի գրավոր արտոնությամբ: Խմբագրությունը միշտ չէ, որ համաձիտ է հեղինակների կարծիքներին կամ տեսակետներին:
Նյութերը չեն գրախոսվում և չեն վերադարձվում:
Ծավալը 12 էջ: Ստորագրված է 25.02.2021:
Գինը 200 դրամ: Տպաբանակը՝ 101:

Մեր կայքում տեղ գտած հրապարակումների հեղինակային իրավունքը պատկանում է բացառապես «Երաժիշտ» ամսաթերթի «ԵՊԿ հրատարակչությանը» (conservatory.am): Այլ ՋԼՍ-ներում սույն կայքի հրապարակումներից որևէ մեկը անթույլատրելի վերահրապարակելու համար անհրաժեշտ է «ԵՊԿ հրատարակչության» (conservatory.am) համաձայնությունը: Լրատվամիջոցները կարող են «Երաժիշտ» ամսաթերթից մեջբերումներ վերահրապարակել միմիայն հատվածաբար՝ պարտադիր օգտագործելով հիպերհղում:

Գովազդի տեղադրման համար դիմել խմբագրությունն նշված հասցեով.

0001, ք. Երևան, Մարկ Գրիգորյան 2
+374 10 52 39 93+118
+ 374 55 00 21 62
http://www.conservatory.am,
E-mail: yerazhisht@gmail.com
https://www.facebook.com/Yerazhisht-newspaper-Yerevan-State-Conservatory-6490150508214/

